№ 142 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 2

1908

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 2 № 142

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարւանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

## 1908 ԹՒԻ ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳ ՏՈԿՈՍԱԲԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԱԶԱՏ Է ԴՐԱՄԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԻՑ

## ԵՒ ԲԱՑ Է ԹՈՂՆՎՈՒՄ

### 1908 ԹՒԻ ՅՈՒՆԻՍԻ 19-Ի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿԱԶԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ,

## 200,000,000

### ՐՈՒԲԼՈՒ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ Է

Փոխառութեան օբլիգացիաները բաց են թողնվում **100, 200, 500, 1000** և **5000** րուբլի արժողութեամբ

և բերում են, սկսած 1908 թւի մարտի 1-ից, 5% տարեկան եկամուտ, որոնք վճարվում են տարեկան երկու անգամ՝ մարտի 1-ին և սեպտեմբերի 1-ին։

**Տոկոսների Վճարը Մշտապէս Ազատվում է Դրամական Դրամագլուխներից Վերցվող Եկամուտների Տուրքից։**

Ներկայ փոխառութեան բոլոր օբլիգացիաները կը հանգցվեն 45 տարւայ ընթացքում, իւրաքանչիւր տարւայ տիրաժների միջոցով, սակայն 1917 թւի մարտի 1-ից աւելի վաղ չի կատարվի ցպայմանաժամային հանգցումն ոչ սաստկացրած տիրաժներով, ոչ էլ կօնվէրսիայի կամ յետ գնման միջոցով։

Առաջին տիրաժը, հանգցման պլանի համաձայն, տեղի կունենայ 1909 թւի նոյեմբերին։

Պայմանաժամային կուպօնների և տիրաժ դուրս եկած օբլիգացիաների վճարումը տեղի կունենայ Պետական բանկում, նրա գրասենեակներում, բաժանմունքներում և գանձատներում։

Տիրաժ չը դուրս եկած օբլիգացիաները կընդունվեն որպէս գրաւական արքունական կապալների և մատակարարումների համար, նոյնպէս և որպէս ապահովութիւն ակցիզի և մաքսահարկի յետաձգվող վճարի այն գներով, որ որոշում է ֆինանսների մինիստրութիւնը։

Վերոյիշեալ փոխառութիւնը իրագործվում է ստորև յիշատակված տասը բանկերի միջոցով՝ հրապարակական ստորագրութեամբ։ Ստորագրութիւնը բացվում է յուլիսի 4-ին ցերեկվայ 10 ժամից մինչև 3 ժամը Պետական բանկում, նրա գրասենեակներում և բաժանմունքներում և Վոլժսկո-Կամսկի Առևտրական, Ս.-Պետերբուրգի Միջազգային Առևտրական, Ռուսական արտաքին առևտրի համար, Ս.-Պետերբուրգի [illegible] Ռուս-Չինական, Մոսկվայի Առևտրական, Ազով Դոնեան Առևտրական, Հիւսիսային, Ռուսական Առևտրա-Արդիւնաբերական, Սիբիրեան Առևտրական բանկերի բաժանմունքներում։

Ստորագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում են նոյնպէս Ս. Պետերբուրգի մասնաւոր, Առևտրական, Մոսկվայի Առևտրական, Մոսկվայի գիւղային բանկերում և բանկային տներում Գ. Վավէլբերգի Վարշավայում և Պետերբուրգում, Ինկէր և Ընկ. Պետերբուրգում ու Մոսկվայում, Եղբարք Ժամհարեանների Մոսկվայում։ Նշանակվում է 95% անուանական արժողութեան աւելացնելով ընթացիկ տոկոսները տարեկան 5%-ի չափով 1908 թւի մարտի 1-ից մինչև վճարի օրը։

Իսկական օբլիգացիաները պատրաստելուց առաջ կը տրվեն առանձին ժամանակաւոր վկայականներ, որոնք կունենան կուպօններ 1908 թւի սեպտեմբերի 1-ի և 1909 թւի մարտի 1-ի ժամանակամիջոցով և այն հիմնարկութեան շտէմպելով, որը տուել է վկայականը։ Վերջը այդ վկայականները ձրիաբար կը փոխարինվեն իսկական օբլիգացիաներով 1909 թւի սեպտեմբերի 1-ի ժամանակամիջոցի և հետևեալ կուպօններով։ Փոխանակութեան տեղի և ժամանակի մասին տեղի կունենայ առանձին յայտարարութիւն։

Ստորագրվողները իրանց հասանելիք օբլիգացիաները կը ստանան ամեն ժամանակ մաս-մաս կամ լրիւ՝ սկսած 1908 թւի յուլիսի 12-ից։ Յամենայն դէպս ստորագրվողները կարող են ստանալ ոչ պակաս մի քառորդից 1908 թւի յուլիսի 12-ի իրանց հասանելիք անուանական դրամագլխի, մի քառորդը ոչ-ուշ 1908 թւի սեպտեմբերի 1-ից, մի քառորդը ոչ-ուշ 1908 թւի հոկտեմբերի 15-ից, մի քառորդը ոչ-ուշ 1908 թւի դեկտեմբերի 1-ից։ Ստորագրվողները, որոնց հասնում են ըստ բաժանման մինչև 1000 րուբլի գումարի օբլիգացիաներ, վճարում են նրանց լրիւ 1908 թւի յուլիսի 12-ին։]

**Ստորագրութեան Ժամանակ պէտք է Ներկայացվի Գրաւական Պահանջած Օբլիգացիաների Արժողութեան 5%-ի Չափով,**

կամ առձեռն դրամով կամ տոկոսաբեր թղթերով, որոնց ստորագրութիւնն ընդունող հիմնարկութիւնն ընդունում է որպէս բաւարար ապահովութիւն։

Այն դէպքում, եթէ պահանջները կը գերակշռեն փոխառութեան ընդհանուր գումարից, տեղի կունենայ միակերպ, համասարապէս բաժանում։

(ու. շ. ե. հ.) (առ.) 4—3

---

## Երևանի Հայոց Թեմական Դպրոցի Համար

## ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Հետևեալ առարկաներից.—
Հայոց լեզուից բարձր դասարաններում—23 դաս։
Ռուսաց լեզուից երկու I դասարաններում—12 դ. և IV, V, VI դասար. (VI դ. ռուսաց գրական.)—13 դաս։
Թւաբանութեան՝ երկու I և երկու II-ում—16 դաս։
Թւաբանութեան, հանրահաշւի և երկրաչափութեան՝ III, IV, V, VI դ. դ.—22 դաս։
Ընդհանուր, հայոց և ռուսաց պատմութեան համար—21 դաս։
Ընդհանուր, Հայաստանի և Ռուսաստանի աշխարհագր. դասեր—16 դաս։
Բնագիտութեան—4 դաս։

Խնդիրները ընդունվում են մինչև յուլիսի 15-ը։ Խնդիրների հետ պէտք է ներկայացնել ուսման իսկական վկայականները կամ նրանց վաւերացված պատճէնները։

Դասագինը՝ ռուսաց բարձրագոյն ուսումնաւարտների համար 60 ր.,
ճեմարան և միջնակարգ դպրոցներ աւարտածների համար 40 ր.
և 5-ական րուբլի գրաւորների համար (լեզուներից և մատեմատիկայից)։
Դիմել՝ Երևան, Թեմական դպրոց։
(ե. չ. շ.) առ. 3—2

---

## Թիֆլիսի Ժողովարան

Չորեքշաբթի, յուլիսի 2-ին
Ամառային շինութեան մէջ
պ. պ. անդամների և կանդիդատների երեխաների համար, ուսուցչուհի Վ. Գ. Տէր-Պօղոսեանի ղեկավարութեամբ, երեկոյեան 6-ից մինչև ժամը 9-ը կը սարքվեն
ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ
(ա.) 1—1

---

## ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Մանուկ-Յովհաննէս Տէր-Յակոբեան, Բնիկ խարբերդցի, Քեսերիկ գիւղէն, աւելի քան 22 տարի է, որ եկած է այս կողմերը. կը կարծուի թէ ինքը կը մնար ժամանակ մը Թիֆլիսի մէջ և յետոյ Թիֆլիսի մօտ Ծալկա անունով գիւղի մը մէջ ինքը ամուսնացած է յոյն աղջկան մը հետ։ Արհեստով կօշկակար է։ Գիտցողները թող հաճին հաղորդել «Մշակի» խմբագրութեան։
(ա.) 6—3

---

## ՀԵՐԹԱԿԱՆ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ

Պետական Դումայի առաջին նստաշրջանի վերջանալը յոյս է ներշնչում, որ աշնանից հերթական կը դառնայ և միւս խնդիրների ու ծրագիրների քննութիւնը։

Նրանց թւում, անշուշտ, որոշ տեղ կը բռնեն և կովկասեան խնդիրները։

Թէ հողային, թէ վարչական, թէ կրթական և թէ տնտեսական մի շարք խնդիրներ, որոնք դրված են ասպարէզի վրա, սպասում են իրանց օրէնսդրական ձևակերպութեան։

Իսկ որպէսզի օրէնսդրական նրանց ձևակերպութիւնը լինի աջող և նպատակայարմար, կարևոր է, որ Պետական Դումայի անդամների և Դումայի կազմած յանձնաժողովների տրամադրութեան տակ լինէին լիառատ նիւթեր վերաբերեալ քննվող խնդիրներին։

Երբ երկու տարի սրանից առաջ յոյս կար, որ առաջին Պետական Դուման պէտք է որոշ սիստեմով քննութեան առնէր պետութեան մէջ հերթական դարձած բոլոր խնդիրները, մենք կովկասցիներս նոյնպէս ցանկութիւն և պատրաստակամութիւն յայտնեցինք զբաղվել մեր երկրի վերաբերեալ էական խնդիրների ուսումնասիրութեամբ և մշակութեամբ։

Սակայն առաջին Դումայի կարճատև լինելը և նրա պարապմունքների ընդհանուր բնաւորութիւն կրելը յետ մղեցին կովկասեան խնդիրները քննութեան ասպարէզից, մանաւանդ որ շատ ուրիշ էական ծրագիրներ մնացել էին առանց քննութեան։

Նոյնն էլ եղաւ երկրորդ Դումայի ժամանակ։ Եւ պատգամաւորները ցրվեցին իրանց տեղերը համարեա թէ ոչ մի օրէնսդրական քայլ չարած երեսփոխանական ժողովում։

Յետաձգվեց ասպարէզի վրա դրված խնդիրների քննութիւնը, մինչև որ ռուսական պարլամենտը ընդունակ կը հանդիսանայ զբաղվելու այդ քննութեամբ։

Այժմ, երբ մեծացել են յոյսերը, թէ Պետական Դուման այլ ևս չի յետաձգի հերթական խնդիրների քննութիւնը, պարտաւորական է դառնում մեզ համար արդէն լուրջ կերպով զբաղվելու այդ խնդիրներով և նիւթեր մատակարարելու Դումայի գործողներին՝ մանրամասնօրէն ուսումնասիրելու և լուսաբանելու համար խնդիրներին վերաբերեալ բոլոր հանգամանքները։

Անշուշտ, առաջին և երկրորդ Պետական Դումայի տրամադրութիւնն աւելի նպաստաւոր էր ընդարձակ և ազատ բարենորոգչական ծրագիրների համար։ Եւ անտարակոյս նախկին Դումաները աւելի գոհացրած կը լինէին կովկասեան ազգաբնակութեան սպասողական զգացմունքները։

Ուստի մենք ստիպված ենք այժմ աւելի ևս մեծ եռանդով ու լրջութեամբ կպչել գործին և աւելի ևս համոզիչ պատճառաբանութիւններով հիմնաւորել ու պաշտպանել մեր երկրի բարենորոգութեան վերաբերեալ ծրագիրները։

Ահա այդ հերթական խնդիրներն առաջ մղելու և նրանց լուրջ ուսումնասիրութեան հարցն է, որ մենք հանդէս ենք դնում մեր գործողների առաջ, հրաւիրելով մարդկանց աշխատանքի։

Ա. Քալանթար

---

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

*Թաւրիզ, 30 յունիսի*

Առաւօտեան յեղափոխականների ամբոխը կարմիր դրօշակ բարձրացրեց նախկին անջումանի շինութեան գլխին։ Կէսօրին սարդար Ռահիմ-խանը հազար ձիաւորներով քաղաք մտաւ Խիաբան քաղաքամասով, չը հանդիպելով ընդդիմադրութեան բնակիչների կողմից, որոնք յանձնեցին մի թնդանօթ և հրացանները։ Ռահիմ-խանը իջևանեց շահի «Բաղիշամալ» այգում։ Սպասում են, որ շուտով կը պաշարվի յամառող Ումրախիզ թաղը, ուր առաւօտեանից տեղի է ունենում հրացանաձգութիւն։

Շահը հեռագրով խստագոյն հրաման է տուել սարդարին՝ վերջ դնել ապստամբութեան, կանգ չառնելով միջոցների առաջ։ («Հ. Գ.»)

*Պետերբուրգ, 30 յունիսի*

Ներքին գործերի մինիստրութեան մատակարարական մասը նահանգների կառավարիչներին ուղարկեց մի հրահանգագիր, որով ընդգծում է, որ մի քանի նահանգներում աշնանացանը սպասվում է միջինից ցածր, որովհետև աշնանացանի մի մասը փչացաւ, իսկ մի մասն էլ չէ ցանված։ Որովհետև աշնանացանի բերքը կարելի է լրացնել միանգամայն բաւարար գարնանացանի հունձով, ուստի այդպիսի տեղերում ոչ մի գումար չը պէտք է տրվի փոխարինաբար։ Առհասարակ հարկաւոր է մանրամասն հետագոտել ազգաբնակութեան դրութիւնը և իր ժամանակին տեղեկացնել մինիստրութեանը պահանջի իսկական չափերի մասին և թէ տեղական միջոցներով ինչ կերպ կարելի է բաւարարութիւն տալ այդ պահանջին։ Ընդ սմին գիւղացիական հաստատութիւնները պէտք է ամենայն զգուշութեամբ և տնտեսօրէն որոշեն փոխատուութիւնների չափը։ Որ աղբիւրից էլ որ այդ փոխատուութիւնները լինեն, այդպիսիները կը տրվեն միայն բացառիկ դէպքերում, երբ ազգաբնակութիւնը վճռականապէս կարող չը լինի եօլա գնալ սեփական միջոցներով։ («Հ. Գ.»)

—

*Պետերբուրգ, 30 յունիսի*

Դատաստանական պալատի յատուկ ատեանը վըբօրգեան կոչի առիթով եօթ մեղադրեալներին էլ դատապարտեց 3-ամսվայ բանտարկութեան։

(«Հ. Գ.»)

—

*Բլագօվէշչենսկ, 30 յունիսի*

Գտնվեց անլէգալ կուսակցութեան գաղտնի բնակարանը։ Գրաւվեց ձեռքի մամուլ և մօտ 15 պուդ տառ։ Ձերբակալվեցին 11 հոգի։ («Հ. Գ.»)

—

*Բէլգրադ, 30 յունիսի*

Միլօւալվէվիչը հրաժարվեց կաբինէտ կազմելուց։ Թագաւորը առաջարկեց կաբինէտ կազմել հին-արմատական Միլօվանօվիչին։ Սա բանակցութիւններ սկսեց քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչների հետ։

(«Հ. Գ.»)

—

*Կ. Պօլիս, 30 յունիսի*

Այժմեան շարժման մասին տեղեկութիւններ տալու համար տեղս էր կանչվել Սալօնիկի 14-րդ հեծելազօրի հոգևորականը։ Յունիսի 28-ին, գալուց առաջ, անյայտ անձինք վիրաւորում են նրան վտանգաւոր կերպով։ Ըստ երևոյթին, հէնց այս առիթով էլ տարածվեցին Հիլմի-փաշայի կեանքի դէմ մահափորձ կատարելու անհիմն լուրերը։

Մօնաստիրի դէպքերի մասին Բ. Դուռը մի հրահանգ է պատրաստում, որով այդ լուրերը անուանվում են վերին աստիճանի չափազանցված։

(«Հ. Գ.»)

—

*Կ. Պօլիս, 30 յունիսի*

Երէկ «Sidon» ֆրանսիական նաւի մէջ, որ դուրս էր եկել Սալօնիկից և գալու էր Կ. Պօլիս, մի թիւրք օֆիցէր վիրաւորել է [illegible] բալ Սադըկ-Փաշալ-փաշային։ Նաւը հասել է Դարդանէլ։ Բ. Դուռը պահանջելու է յանձնել մարդասպանին։

—

*Փարիզ, 30 յունիսի*

«Temps»-ը համակրանքով քննում է մակեդօնական հարցի անգլիական նօտան և ասում է, որ Անգլիան միշտ կանգնած է եղել այն տեսակէտի վրա, թէ անհրաժեշտ է նախ կարգուկանօն մտցնել Մակեդօնիայում, այնուհետև արդէն գործադրել բարենորոգումները։ Լրագիրը գոհունակութեամբ ընդգծում է, որ սուլթանի գերիշխանութիւնը միանգամայն ընդունելի է Գերմանիայի և Աւստրիայի համար։ («Հ. Գ.»)

—

*Լօնդօն, 30 յունիսի*

Մակեդօնական բարենորոգումների նախագծի մասին բանակցութիւնների յետագայ ընթացքի վերաբերութեամբ Րէյտէրին հաղորդում են, որ Ռուսաստանի հետ միասին մշակված Մակեդօնիայի զինւորական ուժերը գործադրելու նախագիծը ներկայացված է Անգլիայի ձեռքով մնացած մեծ պետութիւններին։ Ինչ վերաբերում է մնացած բարենորոգութիւններին, ի թիւս որոնց ֆինանսական և արդարադատութեան բարենորոգումներին, այն առաջարկութիւնները, որ արել է ռուս կառավարութիւնը շահագրգռված պետութիւններին, նոյնպէս այն բանակցութիւնների հետևանքն են, որոնք տեղի ունեցան Ռուսաստանի և Մեծ-Բրիտանիայի միջև։

Կ. Պօլսի անգլիական հաւատարմատարը նշանակված է Թէհրանի դեսպան։

(«Հ. Գ.»)

—

*Բերլին, 30 յունիսի*

«Köl. Zeit.»-ին հաղորդում են Կ. Պօլսից, որ Մէմդի-փաշայի տեղ Մօնաստիր նշանակված մարշալ Օսման-փաշան հիւանդութեան պատրուակով հրաժարվեց պաշտօնատեղին գնալուց։ Նրա անձնափոխանորդ Րահիմ-փաշան նոյնպէս հրաժարվեց կատարել Մօնաստիր մտնելու պատուէրը։ («Հ. Գ.»)

—

*Րիգա, 30 յունիսի*

Երեկոյեան Ստոլբօվայա և Մարիինսկայա փողոցներում հրդեհը ոչնչացրեց մի քանի տներ, փայտէ պահեստը և կօնսէրվների ֆաբրիկան։ Վնասները չափազանց մեծ են։ Շատ ընտանիքներ մնացին անտուն-անտէր։

(«Հ. Գ.»)

—

*Մալթէ, 30 յունիսի*

Յունիսի լոյս 29-ի գիշերը «Ամալդէա» նաւում, ուր ապրում էին 80 անգլիական նաւահանգստային բանւորներ, պայթեց մի ռումբ, որ գաղտնի կերպով ինչ-որ մէկը դրել էր տախտակամածի տակ։ Պայթումից սպանվեց 1, վիրաւորվեցին 7 բանւորներ։ Ոստիկանութիւնը 1000 կրօն նշանակեց յանցաւորին բռնելու համար։

Շվէդական թագաւորը անձամբ տեղեկութիւն հարցրեց հիւանդանոցից վնասվածների առողջական դրութեան մասին։ Նրանց կեանքը վտանգից զերծ է։ («Հ. Գ.»)

## ԴԷՊՔԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

*Թաւրիզ, 26 յունիսի*

Ամսիս 23-ից հրացանաձգութիւնը դադարել էր։ Այդ օրը ռուսաց հիւպատոսը կօզակներով և իր ամբողջ սվիտայով գնաց Խիավան թաղը և համոզեց այնտեղի կռւողներին, որ այլ ևս զէնքի չը դիմեն։ Այդ թաղի պարագլուխ Բաննա-Բաղըը առարկել էր, որ իրանք երբէք ցանկութիւն չունեն զուր արիւն թափելու. իրանց հարկադրում են Ղարադաղի կիսավայրենի ձիաւորները, որոնք յարձակվում են, թաղերը կողոպտում և նոյնիսկ իրանց ընտանեկան պատիւը շօշափում. իրանց կռիւը եղել է մինչև օրս ակամայից և ինքնապաշտպանողական, խնդրել են հիւպատոսից ցոյց տալ իրանց մի միջոց, որպէսզի կարողանան կռուից խոյս տալ։ Հիւպատոսը խոստացաւ տալ ռուսական մի դրօշակ, յայտնելով որ եթէ ձիաւոր զօրքը համարձակվի թաղի վրա գալ, այն ժամանակ ինքը ստիպված կը լինի իր ուժերով թէ թաղը պաշտպանել և թէ դրօշակը։

24-ի առաւօտեան դրօշակն ուղարկվեց. ուժասպառ ժողովուրդն ընդառաջ ելաւ և ի նշան ուրախութեան երկու ոչխար զոհեց։ Հիւպատոսը նոյն օրը տեսակցեց և մուշտէիդների հետ և ապա երեկոյեան գնաց դարձեալ նոյն կազմով Սաթթար-խանի մօտ։ Վերջին օրերս հերոսացած Սաթթարխանը ևս Բաննա-Բաղըի պէս խօսեց, իր ցաւակցութիւնը յայտնելով, որ ինքը և իր ընկերները ստիպված իրանց արիւնակիցների արիւնն են թափում, շնորհիւ կրօնականների, որոնք օգտվելով ամբոխի տգիտութիւնից՝ սահմանադրականներին հռչակում են բաբիներ (որոնք խիստ հալածվում են Պարսկաստանում. [illegible]ատներ, թշնամիներ իսլամի) և [illegible] արիւնհոսութեան պատճառ դառնում։ Նա, ի նշան յարգանաց դէպի հիւպատոսը, ուղարկում է հիւպատոսարան ձիաւոր զօրքից բռնված եօթը գերիներին, խոստանում է հանգիստ մնալ, եթէ անհանգստացնողներ չը լինեն իրանց։ Հիւպատոսի այս շրջագայութիւնը կարծել էր տալիս, որ հակառակորդները զէնքերը ցած կը դնեն՝ հպատակվելով առ այժմ ժամանակաւոր յաղթանակով Թէհրանին։

24-ին կառավարութեան խնդրանօք, պարսից և ռուսաց կօզակների առաջնորդութեամբ, հիւպատոսը շրջագայեց ամբողջ քաղաքի շուկաները, յորդորեց բանալ խանութները և զբաղվել առօրեայ հոգսերով։ Բայց վերջին օրերի դէպքերը այնպիսի սարսափով են համակել ժողովրդին, որ ոչ ոք չը համարձակվեց խանութները բանալ։ Այդ օրը երեկոյեան Սաթթար-խանը զինված և անզէն հետևողներով եկաւ հայոց թաղում գտնվող ռուսաց հիւպատոսարանի մօտի մզկիթը. այդտեղ իր կողմնակից կրօնաւորներից խօսողներ եղան, գովաբանեցին Սաթթար-խանի անձնազոհութիւնը դէպի իր ազգակիցները, ցաւակցութիւն յայտնեցին թափված արիւնների համար, այդ բանում մեղադրելով մեծ կրօնաւորներին, որոնց շնորհիւ թաղային կռիւներ տեղի ունեցան։ Այդտեղից Սաթթար խանը մի քանի մարդկանցով այցելեց հիւպատոսին և խնդրեց, որ միջնորդէ հակառակ բանակից իրանց գերիները ստանալու։ (Ասում են, որ արքայականները գերիները յետ չը դարձրին. ըստ ոմանց արդէն սպանված են)։ Այդտեղից գնալով լուսանկարչի մօտ նկարվեց իր զինակիրներով։ Երէկվանից էլի մեծ բազմութիւն հաւաքվեց մզկիթը։ Խօսում են զանազան հռետորներ աւելի կրօնական բնաւորութեամբ։ Ցաւակցութիւններ են յայտնում արիւնհեղութեան պատճառով։

Երէկ ուշ երեկոյեան ռուսաց հիւպատոսը վերադարձաւ իր ամարանոցը՝ Նամաթաբադ։ Այսօր հիւպատոսարանի պարսիկ թարգմանը և վաճառականապետը գնացին շուկայ՝ խանութները բանալ տալու համար։ Հաւանական է թւում աջողութիւնը։

Հացի և կենսական մթերքների պակասութիւնը օր ըստ օրէ աւելի զգալի է դառնում։ Քաղաքը շրջակայքից տեղեկութիւն չունի։ Կողոպտվող գիւղերի ժողովուրդը շարունակ քաղաք է թափվում բողոքելու, բայց ո՞վ է լսողը։

Րահիմ խանի ձիաւորները անցեալ օրը քշել-տարել են 409 ուղտ։ Ատրպատականը տակն ու վրա անելու համար Րահիմ-խանը իր ձիաւորներով բաւական է։ Եթէ քաղաքի կռւողները չեն ուզում հրացանները ցած դնել, դրա միակ պատճառը կարելի է համարել այդ աւազակաբարոյ ձիաւորների երկիւղը։

Այս մի քանի օրվայ դրութիւնից կարելի է եզրակացնել, որ հակակառավարականները իրանց ուժեղացած են համարում։ Խօսվում է անջումանը վերականգնելու մասին։ Ասում են, որ Դավաչի թաղում երկպառակութիւն է ընկել. թաղեցիներից շատերը մեղադրում են մուշտէիդներին, որոնք իրանց հասկացրած են եղել, թէ երբ կռւում են իսլամի թշնամիների դէմ։ Որոշ բան ասել անհնար է։ Այս րօպէիս փոխկառավարչապետը շուկայում պահակներ է դնում, յորդորելով խանութները բանալ, բայց առ այժմ համոզվողներ չը կան։ Փաստ է այն, որ սահմանադրականները Թաւրիզում չեն ընկճված և մտադիր էլ չեն ընկճվելու։ Եթէ դրութիւնը այդպէս տարտամ շարունակվի, հացի սովը հետզհետէ սպառնալից դառնայ, քաղաքի անիշխանութիւնը շարունակվի, դժուար է գուշակել, թէ այդ դէպքում բանն ինչով կը վերջանայ։

Այստեղից Արդաբիլի կողմերն ուղարկված Մօլլա Իմամ Վերդին, որը ուղարկված էր օգնութեան հրաւիրելու սահմանադրականներին, Արդաբիլի նահանգապետից կալանաւորված է և կախված։

Իբօ

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Մ. Մ. ԿՕՎԱԼԵՎՍԿՈՒ ՃԱՌԸ

(Ժուռնալիստների կոնգրէսի բացման օրը)

—

Երջանիկ եմ, որ ռուս ժուռնալիստների առաջին պրօֆէսիօնալ համաժողովը գումարվում է նրա համար, որ ի դիմաց ամբողջ ռուս հասարակութեան յայտնէ մեծ Տօլստոյին, այնքան սիրունդների դաստիարակչին, իր սրտագին շնորհակալութիւնը նրա փառաւոր գործունէութեան համար։ Կանգնել այն դրօշակի տակ, որի վրա գրված է «Խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» (մեզ յայտնի չէ, որ աւետարանի այդ խօսքերը ամենից լաւ են արտայայտում Տօլստոյի հիմնական միտքը), ռուս պարբերական մամուլի համար հաւասարազօր է այն խոստովանութեան, որ կուսակցական շահերը պաշտպանելու նպատակով նա երբէք աչքաթող չի անի թէ ռուս ժողովրդի ընդհանուր և թէ ամբողջ առաջադիմող մարդկութեան բարօրութիւնը։ Տօլստոյ իր ամբողջ կեանքի ընթացքում ուսուցանում էր և շարունակում է ուսուցանել ոչ միայն իր գրուածքներով, այլ և իր անձնական ընթացքով, որ նրա համար ամենից թանգ է զարթեցնել մարդկանց մէջ բարի զգացմունքները։ Նորերս նրա հրաժարումը իր [illegible] նախմբութիւնից բացատրվում է նրանով, որ նա չէր ցանկանում ում և իցէ պատճառել գժգոհութիւն կամ չարութիւն։ Մենք խոնարհվեցինք նրա կամքի առաջ, նրա մեզ տուած մեծ օրինակի առաջ, կամաւորապէս հրաժարվելով այն բանից, որ գրողների, մինչև անգամ ամենամեծ գրողների մեծամասնութեան համար կազմում է նրանց գրականական ասպարէզի պսակը։ Մենք հրաժարվեցինք մեր հիացմունքին, մեր խոնարհմանը Տօլստոյի հանճարի առաջ յօբելեանական տօնախմբութիւնների սովորական ձևը տալուց և կանգ առանք նրա 80-ամեակի ուրախալի օրը տօնելու մտքի վրա այնպիսի ակտերով, որոնց նպատակն է յաւերժացնել նրա փառաւոր անունը որևէ հանրօգուտ գործով։ Մեր համաժողովը կեանքի է կանչված հէնց այդ ցանկութեամբ, որը նոյնպէս կենդանի արձագանք է գտել մայրաքաղաքի և գաւառական մամուլի մէջ, սակայն ի նկատի ունենալով նուիրել վերոյիշեալ հարցին մեր ժամանակի մեծ մասը, մենք դիտաւորութիւն ունենք միևնոյն ժամանակ ցոյց տալ մեզ հաւատարիմ հետևողներ Տօլստոյի վարդապետութեան, որը կեանքի ամենաբարձր նպատակը համարում է ինքնակատարելագործութիւնը։ Մենք այդ պատճառով որոշեցինք մտցնել մեր պրօգրամի մէջ այն միջոցների քննութիւնը, որոնցով մեր մամուլը կարողանար ապագայում ևս ապահովել իր համար հասարակական խղճի անաչառ ձայնի արժանի համբաւը, որ ստեղծել են նրա համար զանազան ժամանակ Նովիկօվ և Կարամզին, Պօլէվօյ և Ակսակօվները, և նրա պարագլուխների երկար շարքը, մինչև Կօրշը և Սալտիկօվը։ Ես յիշում եմ միայն հանգուցեալների անունները, ինձ կոչված չը համարելով դատել իմ ժամանակակիցների և գրչի ընկերների մասին։

Խօսելով այն մասին, որ մեր մամուլը վայելում է ըստ արժանւոյն բարի անուն, ես ի նկատի ունեմ, որ մեր պարբերական հրատարակութիւնները երբէք լուրջ առիթ չեն տուել մեղադրանքի այն բանում, որ նրանք ստրկացած են այս կամ այն ունեոր դասակարգին և որ նրանք նրանց շահագրգռված պահանջների միակողմանի մունետիկներն են։ 30 տարի առաջ Կարլ Մարկսը, «Կապիտալի» հեղինակը, ինձ հետ խօսակցելու ժամանակ, հանաքով, բացատրում էր այդ, որպէս նա էր ասում, ռուս մամուլի «ազնուութիւնը» նրա համեմատաբար թոյլ ազդեցութեամբ։ «Նա ազնիւ է,— ասում էր նա,—որովհետև ոչ ոք շահ չունի նրան կաշառել»։ Ժամանակներ, երբ մամուլի ձայնը «ձայն բարբառոյ յանապատի» էր մնում, բարեբաղդաբար, անցեալի սեփականութիւն դարձան։ Ներկայացուցչական վարչութեան եղանակի ժամանակ մամուլը անհրաժեշտաբար դառնում է ամեն տեղ հասարակական մտքի և այդ պատճառով էլ օրէնսդրական գործունէութեան ղեկավար։ Կան մարդիկ, որոնք ուրախ կը լինեն այդ բանի համար, ուրիշները կը տխրեն, սակայն ոչ ոք չէ կարող հերքել այդ, և եթէ այդ այդպէս է, այն ժամանակ հասկանալի է, որ հայրենիքի և ժողովրդական բարօրութեան բարձրագոյն շահերին անարծաթասիրութեամբ ծառայելու համբաւը պահելը ռուսական մամուլի համար անխզելի կերպով կապված է մեր ժողովրդական ինքնագործութեան, մեր թէ կենտրոնական և թէ տեղական ինքնավարութեան առողջ զարգացման հետ։ Ես այդ պատճառով կարծում եմ, որ ներկայ համագումարը կազմողները լաւ արեցին նրա պրօգրամի մէջ մտցնելով պատւի դատարանի հարցը։ Այդ դատարանի կանոնաւոր դրութիւնից և այն վստահութիւնից, որ նա կը կարողանայ դրաւել դէպի ինքը, շատ բանով կախում ունի մեր մամուլի ապագան, այսինքն պահպանել նրա ձեռքում քաղաքական կեանքին կոչված ռուս հասարակութեան խաւերի դաստիարակչի դերը։

Բանալով ռուս ժուռնալիստների առաջին համաժողովը, ես հրաւիրում եմ ձեզ, պարոններ, բազմակողմանի և ըստ կարելոյն անաչառ կերպով քննելու նրա պրօգրամի մէջ մտած հարցերը։ Ձեր որոշումները ոչ միայն հնարաւորութիւն կը տան տօնելու Տօլստոյին և ռուս ազգին արժանի կերպով որպէս ռուս, նոյնպէս և համաշխարհային գրականութեան տօնախմբութեամբ, այլ և սկիզբ կը դնեն ամսագրական և լրագրական գործունէութեան նուիրված անձանց բարոյական կօնտրոլին։ Ոտք դնելով կատարելագործութեան ճանապարհի վրա, ինքնաքննութեան միջոցով, մենք կուժեղացնենք մամուլի ղեկավարող ազդեցութիւնը մեր նորոգված քաղաքական կազմի ժամանակ։

## ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱՆ

—

Երկուշաբթի, յունիսի 30-ին, Թիֆլիսի քաղաքային Դուման կայացրեց իր վերջին, նախ-արձակուրդեան նիստը և զբաղվեց գլխաւորապէս զանազան ծառայողների խնդրած նպաստների քննութեամբ։ Բացի դրանից Դուման կայացրեց հետևեալ որոշումները. 1) քրէական դատի ենթարկել ածուրդային սրահի կառավարիչ Շադինեանին, որ իւրացրել է 704 ռուբլի փող և մինչև այսօր չէ վերադարձրել, 2) մերժել Թիֆլիսի նահանգապետի առաջարկը՝ տալ [illegible] ռուբլի տարեկան բնակարանի համար, 3) մսի և հացի սակագինը փոփոխութեան ենթարկել, այն է պակասեցնել մի կոպէկով տաւարի մսի ֆունտը, իսկ ոչխարի մսի և հացի գինը թողնել նոյնը։

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

*Վաղարշապատ, 24 յունիսի*

Գրել էի, որ Վանքի բժիշկ Կ. Տէր-Խաչատրեանը առաջարկել էր Վաղարշապատի հասարակութեան տարեկան մօտ 500 ր. դնել իր տրամադրութեան տակ՝ խոստանալով ձրի դեղեր բաց թողնել։

Այս առաջարկութիւնը ուսումնասիրելու համար մի քանի անգամ մասնաւոր ժողով գումարվեց. ժողովականները գտան, որ բժշկի առաջարկութիւնը օգտակար է ձրի դեղեր բաց թողնելու նկատմամբ, բայց ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վաղարշապատի շրջանում, կլիմայի տաքութեան շնորհիւ, շատ է տարածված ջերմ ու տենդը, որի դէմ կռւելու համար հարկաւոր է անպայման բժշկական օգնութիւն, որոշեցին բաց անել մի հիւանդանոց առ այժմ 10 մահճակալներով։

Աչքի են ընկնում մի խումբ երիտասարդներ, որոնք ամեն կերպ աշխատում են գլուխ բերել հիւանդանոց բանալու խնդիրը։

Թունիկ

—

*Բագու, 22 յունիսի*

Ախլաթեան գիւղի կարիքներին դէթ մասամբ գոհացում տալու համար, դեռ անցած տարվայ ապրիլից գոյութիւն ունի «Ախլաթեան գիւղի երիտասարդական միութիւնը», որի կենտրոնական մարմինը գտնվում է Բագւում և կառավարում իր ճիւղերին, որոնք հաստատված են Անդրկասպեան երկրի մի քանի քաղաքներում։

Միութեան նպատակն է՝ բաց անել գիւղում գրադարան-ընթերցարան, հոգ տանել և լրացնել գիւղում գոյութիւն ունեցող ծխական միդասեան ուսումնարանի կարիքները, հիմնել շտեմարան և համայնական խանութ, բերել նոր աղբիւրներ և հինները նորոգել, խստիւ հսկել գարնան ժամանակ դաշտային կարգապահութեան, վերջ տալ գիւղում թագաւորող արբեցողութեան, ձեռք առնել և արդարութեամբ հաւաքել պետական հարկերը, հսկել փողոցների մաքրութեան վրա և այլն։

Գէորգ Գէորգեան

—

*Ախալցխա, 23 յունիսի*

Մեր քաղաքում 10 տարի է, ինչ գոյութիւն ունի «Թատերասէրների մշտական խումբ», որ շարունակ ժողովրդական ներկայացումներ է տալիս տեղիս ժողովարանում և Կարապետեան դպրոցում։ Սակայն, ամեն անգամ ներկայացումներ տալիս, սեփական բեմ չունենալու պատճառով, թատերասէրները նեղութիւնների և խոչընդոտների էին հանդիպում, մանաւանդ ժողովրդական էժանագին ներկայացումների ժամանակ։ Ուստի, թատերասէրներն իրանց այդ հասարակական ձեռնարկութիւնը անարգել կերպով առաջ տանելու համար վերջերս ցանկացել էին քաղաքումս հիմնել մի հաստատուն ընկերութիւն, իշխանութիւնից հաստատված որոշ կանոնադրութեամբ։ Սակայն մինչև այս տարի թատերասէրների այդ ձգտողութեան իրագործումը զանազան արգելքների էր հանդիպել։ Վերջապէս այս տարի միայն հնարաւոր եղաւ թատերասէրներին՝ իրանց այդ վաղուցվայ ցանկութիւնն իրականացնել։ Կազմելով տեղական պայմաններին համապատասխան մի կանոնադրութիւն, տեղիս թատերասէրների խումբը այս տարվայ փետրվարին ներկայացրեց Թիֆլիսի նահանգապետին ի հաստատութիւն, որպէսզի թոյլատրվի իրան՝ բաց անել Ախալցխայում «Հայ դրամատիկ սիրողների ընկերութիւն»։ Մայիսի վերջերին իշխանութիւնից թոյլատրվեց նախաձեռնողներին՝ պաշտօնապէս բաց անել յիշեալ ընկերութիւնը։

Անդամ

—

*Բագու, 25 յունիսի*

Ինչպէս յայտնի է, Բագւում 100,000 ր. դրամագլխով մի ընկերութիւն է կազմվում էջմիածնապատկան հողերը ոռոգելու համար ջուր մատակարարելու։

Գործի գլուխ անցած են վստահելի անձեր, որոնք եռանդուն կերպով գործում և ծրագրել էին պայմանը, սակայն մի ուրիշ անձ, որը այդ ծրագիրը կազմված ժամանակ բացակայ էր Բագուից, վերադառնալով՝ յօժարութեամբ մասնակցեց այդ օգտակար գործին և առաջարկեց ուրիշ աւելի օգտակար ճանապարհ ընտրել, այն է՝ ոռոգման համար անհրաժեշտ նկատված ջրի քանակութիւնը փոխանակ մեքենաներով Սև-Ջրից ստանալու ուղղակի Արագածի ստորոտից բերել տալ, ի նկատի ունենալով որ այդպիսով թէ աւելի գիւղօրայք կարող են օգտվել և թէ գործը յարատև կը լինի. խնդրի այդ կերպ լուծումը մասնաւոր շահագրգռական տեսակէտից էլ մեծ օգուտ կարող է տալ։ Այդ առիթով յիշեալ անձը խոստացել է գործը գլուխ բերելու համար մասնագէտ հրաւիրել Պետերբուրգից։ Գործին ձեռնարկող անձինք իրանց հաւանութիւնն են տուել սոյն վերջին ծրագրին։

Յովսէփ Մ.-Շահնազարեան

—

*Ջահուկ գիւղ (Հ.-Նախ. գ.), 20 յունիսի*

Ջահուկի՝ 1905 թւի հայկական կոտորածից յետոյ հայերը երես դարձրին իրանց տանուտէր Աբաս Ջալ-օղլուից և նոյն թւի յունիսի 20-ին դիմեցին Երևանի այն ժամանակվայ գեն.-նահանգապետ պրինց Նապօլէօնին, խնդրելով որ իրանց հասարակութեան համար մի չէզոք անձնաւորութիւն կառավարչական տանուտէր նշանակվի։ Հայերի խնդիրը յարգվեց։ Բանտարկվեց Աբասը և կառավարչական տանուտէր նշանակվեց Րօման Սագինով անունով մի վրացի, որը ստրաժնիկների ուրեադնիկ էր։

Սակայն թուրքերի յաճախակի գանգատների շնորհիւ Սագինովը հեռացվեց գիւղից 1906 թւի փետրվարին և նրա տեղը նշանակվեց Եասօն Բերդնիշվիլին, որը մեծ յարգանք էր վայելում թէ հայերի և թէ թուրք ճնշված դասակարգի կողմից։ Նա մեզանում միակ անաչառ դատաւորն էր ու սանձահարում էր տեղիս թուրք հասարակութեան տականքներին։ Վերջիններս շարունակ գանգատվում էին կառավարութեան առաջ Բերդնիշվիլուց և խնդրում նրան գիւղից մի կերպ հեռացնել։ Սակայն հայերի միջամտութիւններն էլ իսկոյն և եթ յետ էին կասեցնում թուրքերին։

Ապրիլի 24-ին Բերդնիշվիլին նշանակվեց Հին-Նախիջևանի գաւառ. բանտի բանտապետ։ Նրան պէտք է փոխարինէր նրա կանդիդատ ջահկեցի մաշադի Սադըղը։ Հայերը, սակայն, դիմեցին Հին-Նախիջևանի գաւառապետին, որպէսզի Սադըղը տանուտէր չը լինի, այլ մի չէզոք անձ՝ մինչև պատերազմական դրութեան վերացվելը։ Գաւառապետը յարգեց հայերի խնդիրը և իր ժամանակին համապատասխան զեկուցում ներկայացրեց նահանգապետին՝ ժամանակաւորապէս կառավարչական տանուտէր նշանակելով Ջահուկի ստրաժնիկների ուրեադնիկ Իվան Դիակօնովին։

Ջահուկեցի և Նազարաբեցի հայերը Բերդնիշվիլուն Ջահուկում հրաժեշտի ճաշ տուեին։

Գ.-ունի

—

*Ղշլաղ, 28 յունիսի*

Դեռ երկու շաբաթ էր, որ երկինքը շարունակ ծածկված էր սև ամպերով, դաշտերը մշուշով։ Գիւղացին մի տեսակ կասկածանքով էր նայում բնութեան մռայլ տեսարանի վրա։ Յունիսի 28-ի գիշերը ժամը 10-ից սկսվեց թափվել կարկտախառն անձրև, որ տևեց մօտ $1\frac{1}{2}$ ժամ։ Գիւղի հարաւ-արևմտեան կողմից՝ անտառի ծերպերից սկսվեց սոսկալի մի հեղեղ, որը կամաց-կամաց շատանալով դառաւ մի հսկայ զանգուած, աւերմունք և կործանում առաջացրեց իր ճանապարհին։ Գիւղում հեղեղը մուտք գործեց աղքատ գիւղացիների գետնափոր տները, և եթէ անձրևը մի քանի րոպէ էլ շարունակվէր, այն ժամանակ ամբողջ գիւղը հսկայ հեղեղին անշուշտ զոհ կը գնար։

Այդպիսով հեղեղը քշասեց մեր գիւղի արտերի մի մասը։ Մարդկային զոհեր չը կան։ Վնասը զգալի է։ Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն։

Այս տարի բնական աղէտները աղքատ գիւղացուն դրել էին անտանելի դրութեան մէջ։ Վերջին օրերս գոմէշների մէջ երևացել է մի վարակիչ հիւանդութիւն, որը տեղական լեզուով կոչվում է «խուրկ»։

Այս երեք օրվայ ընթացքում այդ հիւանդութեան զոհ են գնացել 8—10 գոմէշ։ Տգէտ գիւղացիները այդ ցաւն էլ համարելով Աստուծոյ պատիժ՝ ցանկանում էին նախապետական ողորմելի «դարմաններով» կռուել այդ հիւանդութեան դէմ. բայց գիտակից գիւղացիները աւելի լաւ համարեցին դիմել վաղօրօք մեր շրջանի անասնաբոյժին։

Սկզբում հիւանդութիւնը մեծ չափեր ընդունեց։ Յոյս ունենք, որ անասնաբոյժը որքան հնար է առաջը կառնի այդ հիւանդութեան տարածման։ Գիւղական տգէտ մասսան նախապաշարմունքով է նայում անասնաբոյժի «դարմաններին»։

Մ. Ղազարեան

—

Վերին-շէն գիւղ (Գանձ. գ.), 29 յուն.

Սրանից մի քանի ամիս առաջ վերին-շէնացիք իրանց միջից մի քանի հաւատարմատարներ են ընտրում՝ գիւղում տեղի ունեցող անպատւաբեր սովորութիւններին վերջ տալու համար։

Դժբաղդաբար՝ գիւղացիների յոյսերը չարդարացան։

Յունիսի 22-ին գիւղի հաւատարմատար Զաւադ Սարգսեանը իր երկու ընկերներով —Հանէս Թամրազեան և Սերգէյ Շահինեան —«ղօրուղներից» դուրս է քշում գիւղացիների 9 հատ եզը և վաճառում մի աւազակի։ Վերջինս խոստանում է ամեն մի եզան համար 10 ր. վճարել «հաւատարմատարին»։

Բաղդի բերմամբ՝ տողերիս գրողը այդ ժամանակ գիւղումն էր գտնվում։ Իմանալով այդ՝ իսկոյն 10 րուբլի եմ տալիս երկու հոգու և շտապ ուղարկում եզները յետ խլելու։ Ուղարկածս մարդիկը գնալով ճանապարհից յետ են խլում 9 հատ եզները և բերում նրանց գիւղ։

Հարկ եմ համարում աւելացնել, որ Զաւադ Սարգսեանը միաժամանակ ընտրված է եղել գիւղացիների կողմից և «ղօրուցապան» (полевой сторожъ), որով իրաւունք է տրված եղել նրան «ղօրուղին» վնաս տուող ապրանքները քշել բերել գիւղ և ապրանքատիրոջից 50-ական կոպէկ տուգանք առնել, այլ ոչ թէ ապրանքները ծախել մի աւազակի՝ իւրաքանչիւրի համար 10 ր. ստանալով։

Այս էլ ձեզ գիւղի «հաւատարմատար»...

Լաչին Ա. Մարտիրոսեան

### ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Մ. Ղարաքիլիսա, 29 յունիսի

Վերջին օրերս այստեղ են ժամանել Վ. Միրզոյեանը իր սիրողների խմբով, և դերասան Աղայեանը՝ մենակ։

Յարգելի դերասանները մտադրութիւն ունեն ամառվայ ընթացքում մի շարք ներկայացումներ տալ ծխական դպրոցի դահլիճում։ Դերասան Միրզոյեանի առաջին ներկայացումը «Կրեչինսկու հարսանիք» կոմեդիան էր, որը անցաւ բաւականին աջող։ Երկրորդ ներկայացումը «Ոճրագործի ընտանիք» դրաման է, որը կայանալու է եշաբթի, յուլիսի 1-ին, դերասան Աղայեանի և տեղական սիրողների մասնակցութեամբ։

Ամբողջ սրտով ցանկանալով յարգելի դերասաններին կատարեալ աջողութիւն, առաջարկում եմ յարգելի դերասաններին մի համեստ խորհուրդ՝ որքան կարելի է ներկայացումները լինեն զուտ ժողովրդական պիէսներից. բացի դրանից՝ համարելով նրանց առանձին-առանձին ներկայացումները անօգտակար, առաջարկում եմ թողնել ամեն տեսակ անձնական հաշիւներ և միացած ոյժով տալ ներկայացումներ։

Գիւղական-ուսուցիչ

### ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

—

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ստուգելով միջնակարգ կրթութիւն ստացած երիտասարդների վկայականների իսկականը, որոնք ներկայումս ուսանում են բարձրագոյն կրթական հաստատութիւններում, պարզել է, որ յիշեալ անձերից մի քանիսը բարձրագոյն դպրոցները մտնելիս խնդրագրերի հետ ներկայացրել են կեղծ վկայականներ և ատեստատներ։ Առ այժմս պարզվել է, որ միջնակարգ կրթութեան մասին կեղծ վկայականներ պատրաստված են եղել հետևեալ արական գիմնազիաների անունից.—Վիլնայի 1-ին, Վարշավայի 2-րդ և 6-րդ, Լօձի, Պետրոկովսկի, Կիեվօ-Պիչէրսկի և Խարկովի 3-րդ, իսկ կեղծ վկայաթղթեր՝ Վարշավայի համալսարանի անունից։ Ի նկատի առնելով այս, ժող. լուս. մինիստրութիւնը բարձրագոյն կրթական հաստատութիւնների իշխանութիւններին առաջարկել է՝ անյապաղ ձեռնարկել ստուգելու բարձրագոյն դըպրոցներում բոլոր ուսանողների վկայականները այնպէս, որ այդ ստուգումը վերջանայ մինչև առաջիկայ ուսման տարվայ սկիզբը։ Իսկ ապագայում այդ երևոյթի առաջն առնելու համար՝ մանրագնին քննութեան ենթարկել բարձրագոյն դպրոցները մտնողների բոլոր վկայականները և կեղծիք գտնելու դէպքում գործը անմիջապէս յանձնել դատարանին, իւրաքանչիւր դէպքի մասին հաղորդելով հանդերձ ժող. լուս. մինիստրութեան։ («О. Б.»)

◆ Բոլոր բարձրագոյն կրթական հաստատութիւններում սկսվել է խնդրագրերի ընդունելութիւնը։ Նիկօլայ կայսրի քաղաքացիական ինժեներների ինստիտուտի 1, 2 և 3 դասընթացքներում ազատ տեղեր չը կան։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մտադիր է այս տարի կրճատել դպրոցական արձակուրդները։ Այսպէս, օրինակ, մտադրութիւն կայ միջնակարգ դպրոցներում պարապմունքները սկսել օգ. 15-ից։ Իսկ մի շաբաթ դրանից առաջ կը սկսվեն քննութիւնները։ («Р. С.»)

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ «Արարատում» կարդում ենք հետևեալը. «Ամենապատիւ տեղակալը մի գրութեամբ դիմել էր պարսից արեգակնափայլ շահին և խնդրել Ատրպատականի նորընտիր առաջնորդ Կարապետ վարդապետին հաստատել իր պաշտօնում։ Որպէս պատասխան այդ գրութեան՝ տեղակալը ստացել է նորին արքայական մեծութիւնից հետևեալ հրովարտակը. «Առ. տ. տեղապահն իմաստնագոյն եպիսկոպոսապետի և հայրապետի ամենայն հայոց քրիստոնէական ուղղափառ եկեղեցւոյ։ Մերս արքայական սէր արտայայտող սերտ ըղձացող է ձերում առողջութեան։ Պատուական գրութիւն ձերդ սրբազնութեան, որ յայտ առնէր գընտրութենէ և գնշանակմանէ տ. Կարապետ ծ. վարդապետի յառաջնորդութիւն Ատրպատականի հայոց, արքայական հայեացք մեր ի նկատի առան։ Եւ քանզի արքայական սիրով տոգորեալ սիրտ մեր հանապազ միտեալ կայ դէպ յանդորրութիւն և հանգըստութիւն ամենայն հպատակաց և բնակչաց մերում պետութեան, ուստի պատուէր հրաման տուաք ամենայն պաշտօնէից և գործակալաց մերոց համայն Ատրպատականի, զի աջակից և օժանդակ լիցին առ ի ճանաչել զնա յառաջնորդութիւն ամենայն հայոց աշխարհին Ատրպատականի, զամենայն գործառնութիւնս հոգևորս յանձն առասցեն նմա և զամենայն արդար պահանջս ի կատար ածցեն փութանակի»։

◆ Երէկ ցերեկվայ գնացքով Սանահին մեկնեց Թեմիս առաջնորդ Գարեգին արք. Սաթունեանը։

◆ Կովկասի Փոխարքայի դիւանատան փոխ-կառավարիչ Սարատօնօվը մեկնեց Սուխում՝ Սուխումի վիճակի գործերը քննելու համար։

◆ Յուլիսի 15-ից Թիֆլիսի բոլոր հիւանդանոցներում մտցվում է հիւանդանոցային տուրք, որով իւրաքանչիւր տեղի համար կենտրոնական հիւանդանոցում և նրա բաժանմունքում ստացվելու է 5 կոպ.։ Իւրաքանչիւր բնակարան ախտահանելու համար ունևորներից ստացվելու է 8 րուբլի։

◆ Թիֆլիսի ժամ. գեն. նահանգապետի կարգադրութեամբ Նիկօլա Կետիաշվիլին աքսորվում է Օրէնբուրգի նահանգը 3 տարով։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հնարաւոր չէ գտել, նահանգապետի առաջարկութեան համաձայն, Թիֆլիսի ոստիկանապետի բնակարանի վարձը՝ 1250 րուբլին դարձնել 2000 ր.։

◆ Վրաց էկզարխութեան ուղղափառ եկեղեցա-ծխական դպրոցների պահպանման համար անդրկովկասեան զէմստվօների փողերից այս տարվայ համար յատկացված է 17,300 րուբլի։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հաստատել է դումայական տնտեսական մասնաժողովի ներկայացրած նոր սակագինը, որի համաձայն տաւարի մսի ֆունտը արժէ—12 կ., ոչխարի մսի ֆունտը—15 կ.։

◆ Կովկասեան շերամապահական կայարանի գործունէութիւնը քննող առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Բերդենսօնը և պրոֆէսոր Շչէլկանովցէվը յունիսի 30-ին մեկնեցին Թիֆլիսից առաջինը՝ Օդեսսա, երկրորդը՝ Մոսկվա։ Քննիչ մասնաժողովի արձանագրութիւնները, որոնց հիման վրա կազմվելու է երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչին ներկայացվելիք զեկուցագիրը, տրված են Փոխարքայի դիւանապետ Պետերսօնին։

◆ Առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Բերդենսօնը, քննելով Թիֆլիսի այգեգործական դպրոցը և գտնելով նրան սոսկալի վիճակի մէջ, իր քննութեան հետևանքների մասին տեղեկացրել է երկրագործութեան գլխաւոր կառավարչին։ Սպասում են, որ դպրոցը կը դրվի բոլորովին նոր հիմքերի վրա պետական գանձատան և գիւղատնտեսական ընկերութիւնների աջակցութեամբ։

◆ Յունիսի 28-ին Ալէքսանդրօպօլ կայարանում իշխանութեան կարգադրութեամբ գնացքի հետ չեն ուղարկում գլխաւոր կօնդուկտօր Լուկա Ջվիրանգցէվին հարբած լինելու պատճառով։ Վերին աստիճանի վիրաւորված համարելով իրան, Ջվիրանգցէվը իրան նետում է գնացքի տակ և մեռնում։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ձրի տոմսակներով օգտվող կողմնակի անձինք յուլիսի 15-ից զրկվում են այդ իրաւունքից։

◆ Անդրկովկասեան երկ. կառավարիչը կարգադրել է լրացուցիչ № 77 bis գնացքը սահմանել Թիֆլիսից Մցխէթ երթեւեկելու համար։

◆ Այսօր երեկոյեան նշանակված է կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան խորհրդի նիստը մի քանի հերթական խնդիրներ քննելու համար։

◆ Կովկասեան հանքային ջրերը մինչև յունիսի 20-ը եկւորների թիւն էր—Պետիգօրսկում—4808 (1907 թ. 5269), Էսսենտուկում—5716 (1907 թ. 6501), Կիսլօվօդսկում--2296 (1907 թ. 3322), Ժելեզնօվօդսկում—2479 (1907 թ. 2442 հոգի), ընդամենը 15,299 մարդ, անցեալ 18,034-ի դէմ։

### ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Յունիսի 29-ին, Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական Աւետիք Գալուստեանի գրպանից, էլեքտրաքարշ նստելու ժամանակ, անյայտ անձի մէկը գողացել է «բրաունինգ» ատրճանակը, № 115327, որի համար Գալուստեանը ունի վկայական։

◆ Յունիսի 30-ին, Կօջօրում ապրող Սկօրօլկօվի 19-ամեայ աղջիկ Եկատէրինան, գողանալով հօր բնակարանից 143 րուբլի փող, գալիս է Թիֆլիս, մօր բնակարանը, Ճավճավաձէվսկի փողոցում, № 12 տանը, այստեղից էլ վերցնելով 113 րուբլու զանազան իրեր, անյայտանում է։ Ոստիկանութեանը աջողվեց ձերբակալել նրան և փողերն ու իրերը վերադարձնել ծնողներին, իսկ ինքը Եկատէրինան յանձնված է քննիչի ձեռքը։

◆ Յունիսի 28-ի գիշերը Զախարիյ Մանջիաշվիլու բնակարանից անյայտ անձեր կեղծ բանալիի օգնութեամբ գողացել են 200 րուբլուց աւելի գումարի զանազան իրեր։

◆ Յունիսի 30-ին, առ. ժամը 10 և կէսին, Շէյթան բազարում, Թիֆլիսեցի Յովսէփ Սահակեանը սպանեց ատրճանակով Բօրչալուի գաւ. բնակիչ Ղահրաման Մամէդ Իբրահիմ օղլուն, որից յետոյ դիմեց փախուստի. հետապնդվելով քաղաքապահ ոստիկաններից, փախուստի ճանապարհին կրակեց կրկին մի քանի անգամ, որի ժամանակ սպանվեց փողոցով անցնող պարսկահպատակ Հաջի Մամէդ Հասան օղլին։ Սահակեանը ձերբակալվեց. հետևելու ժամանակ նա վիրաւորվեց հրացանի գնդակով մէջքից և Միքայէլեան հիւանդանոցը տարվելիս մեռաւ։ Քննութիւն է կատարվում։ Ղահրաման Մամէդ Իբրահիմ-օղլու սպանութիւնը համագիւղացի մի Թուրքի վրէժխնդրութիւնն է, որ կատարել տուեց Սահակեանի ձեռքով, կաշառելով նրան։

◆ Յունիսի 30-ին, Նաւթլուղում, Բագրատ Օգանէսօվի այգում նստած էին և գարեջուր էին խմում Նիկօլայ և Ալէքսէյ Փարսադանօվները, Դարչօ Ախվերդօվը, Իվան Արղութեանը, Նիկօլայ Մէլիկաձէ և Գէորգ ու Ալէքսէյ Յարութիւնեանները։ Յանկարծ մտեցաւ նրանց սեղանին քաղաքային սպանդանոցի սալախ Իլիա Մեմադուլին, բերդան հրացանը ձեռքին և, առանց որևէ առիթի, կրակեց Նիկօլայ Մէլիկաձէին վրա, վիրաւորելով նրան աջ ուսից, որից յետոյ Գէորգ Յարութիւնեանը խփեց Միբադուլուն, իսկ Դարչօ Ախվերդօվը կրակեց նրա վրա մի քանի անգամ ատրճանակից և վիրաւորեց պարանոցից, կողքից, ձեռքից և շրթունքից։ Մեղադրվող Միբադուլին ձերբակալված է։

## ՄԱՄՈՒԼ

«Новое Время» լրագիրը անընդհատ շարունակում է իր ողբերը, գանգատները և գոռումները Կովկասի կործման, վրացիների, հայերի անհաւատարմութեան մասին և յորդորները՝ օր առաջ վերջ դնել Ռուսաստանի և ռուս ժողովրդի համար աղէտաբեր ռէժիմին, իմա կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի իշխանութեան։ Նա այնպիսի չափազանցրած գոյներով է նկարագրում վրացի և հայ յեղափոխական կազմակերպութիւնների գործունէութիւնը, որ՝ Կովկասին անծանօթ մի միամիտ ընթերցող կարող է հաւատալ, թէ վրաց և հայ կազմակերպութիւնները վտանգ են սպառնում ռուսաց հզօր կայսրութեան։ Նա դիտմամբ ծածկում է այն կարևոր հանգամանքը, որ, յամենայն դէպս, ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը ոչ մի բարոյական կապ և առնչութիւն չունի հակապետական խմբակների հետ, որոնց գործունէութեան դէմ մաքառում են նոյնիսկ լուրջ քաղաքական և իսկական ազատագրական կազմակերպութիւնները և մամուլը։

Ուստի մեծ անարդարութիւն և անխղճմտութիւն է մեղադրել մի ամբողջ ժողովուրդ մի քանի խմբակների կամ նոյնիսկ կազմակերպութիւնների գործունէութեան պատճառով և պահանջել այդ ժողովրդի ջնջումը։

«Կովկասեան Մաֆիա» վերնագրով մի մեծ յօդուածով «Новое Время»-ն յայտնում է, որ Թիֆլիսում և Կովկասում անընդհատ կատարվող չարագործութիւնները—էկսպրոպրիացիաներ, ռուս մարդկանց և պաշտօնեաների սպանութիւններ և այլն—կատարվում են որպէս թէ բացառապէս վրացիների և հայերի կազմակերպված և [illegible] ղեկավարվող կազմակերպութիւնների ձեռքով և որպէս թէ վրաց և հայոց կազմակերպութիւնները գործում են իրար հետ համերաշխութեամբ և համաձայնութեամբ։

«Անդրկովկասում գործում են յեղափոխական կազմակերպութիւնների երկու խումբ—հայոց և վրաց, որոնց ամեն մէկը իր առանձին ռազմական կազմակերպութիւնը ունի։ Ըստ փոխադարձ համաձայնութեան, ամեն մէկը նրանցից որոշել է իր գործողութիւնների ռայոնը, բայց մի քանի դէպքերում միասին են դուրս գալիս։ Հայկական կազմակերպութիւնը իր ռազմիկներով գործում է գլխաւորապէս հայերի մէջ, քաղելով նրա միջավայրից միջոցներ իր գործունէութեան համար, պատժելով անհնազանդներին և գործում է Թուրքերի դէմ, իսկ վրաց յեղափոխական կազմակերպութիւնները իրանց ռազմիկների, տէրրօրիստների ձեռքով գործում են գլխաւորապէս կառավարչական հաստատութիւնների դէմ, կատարում են արքունական և հասարակական դրամների էկսպրօպրիացիա և մահացու կռիւ են մղում բոլոր ռուսների դէմ, ռուսաց կառավարութեան ներկայացուցիչների և Ռուսաստանի ու կառավարութեան բոլոր կուսակիցների դէմ։

Եթէ հետևենք, կը տեսնենք, որ ռուսների և պաշտօնատար անձանց բոլոր սպանութիւնները, մի քանի բացառութիւններով (օրինակ Բագուի նահանգապետ Նակաշիձէն սպանվեց դաշնակցականների ձեռքով), կատարվել են վրացիների ձեռքով։ Նկատենք, որ նրանք սպանեցին և շատ վրացիներ, որոնք համակրում են ռուսաց կառավարութեան, մինչև նոյնիսկ բանաստեղծ Ճավճավաձէն։

Վրաց կազմակերպութիւնների գործունէութիւնը բոլորովին համերաշխ է հայ ռազմիկ կազմակերպութիւնների շահերի հետ և վայելում է նրանց ամբողջ համակրութիւնը, երբեմն նաև աջակցութիւնը»։

Լրագիրն ապա մի առ մի թւում է, թէ վրացիների մէջ քանի յեղափոխական կազմակերպութիւններ են գործում։ Բայց շարունակութիւնը կը բերենք յաջորդ անգամ։ Ոչ մի հարկ չը կայ կրկնելու, որ ամբողջ յօդուածը միտումնաւոր է, գունաւորված և չափազանցված։

### ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Գանձակ, 24 յունիսի

Յարգանքով խնդրում եմ «Մշակի» խմբագրութեան տեղ տալ ներկայ նամակիս թերթի մօտակայ համարներից մէկում։

Հոկտեմբերի 7-ին 1907 թ. Խօջալու կայարանից (Շուշու գ.) դէպի Ասկերան տանող խճուղու վրա կորցրել եմ մի զամբիւղ՝ լի զանազան առարկաներով և գլխաւորաբար դօկումենտներով։

Վերադարձնողին խոստանում եմ անյապաղ վճարել 50 րուբլի վարձատրութիւն, միաժամանակ տալով գրաւոր խոստում, որ իմ այդ առարկաները մինչև օրս իր մօտ ունեցող անձի դէմ ոչ մի պահանջ չեմ յայտնի և պատասխանատուութեան չեմ ենթարկի նրան։

Ինձ քաջ յայտնի է, որ այդ առարկաները գտնվում են հայի մօտ, որի անունը և բնակատեղին մինչև օրս կարելի չեղաւ իմանալ, չը նայած ոստիկանական հետախուզութեան, որը նոյնպէս, դժբաղդաբար, ապարդիւն անցաւ։

Թախանձագին խնդրում եմ բարի մարդկանց, որոնք գիտեն իմ առարկաների ուր կամ ում մօտ լինելը, հաղորդեն ինձ նամակով հետևեալ հասցէով՝ Елисаветполь, Губернское Правленіе, որի համար շատ շնորհակալ կը լինեմ։

Խնդրում եմ միւս հայ լրագիրներին արտատպել այս նամակը։

Դօկտոր Ա. Շիրման

—

Թիֆլիս, 30 յունիսի

Կաթողիկոսական ընտրութեան առիթով Թիֆլիսում ընտրված ժամանակաւոր նախընտրական յանձնաժողովը անհրաժեշտ է համարում տալ ի գիտութիւն հասարակութեան մայիսի 25-ից մինչև յունիսի 13-ի ժամանակամիջոցում Թիֆլիսում գումարված կաթողիկոսական ընտրութեան կենտրոնական խորհրդակցական ժողովի մասին հետևեալ տեղեկութիւնները։ Կենտրոնական խորհրդակցական ժողովը ունեցաւ ընդամենը 7 նիստ։ Ժողովը բաղկացած էր գաւառներից եկած լիազօրներից, Թիֆլիսում ընտրված ծխական պատուիրակներից, յանձնաժողովի անդամներից և կողմնակի անձինքներից։ Զբաղմունքի գլխաւոր առարկաներն էին—առաջին՝ ազգային եկեղեցական վարչական սիստեմի բարեփոխումը, և երկրորդ՝ կաթողիկոսական թեկնածուների խնդիրը։ Խորհրդակցական ժողովը, լսելով յանձնաժողովի զեկուցումը ազգային եկեղեցական-վարչական սիստեմի վերաբերեալ և միանգամայն հաւանութիւն տալով կաթողիկոսական գործավարութեան շրջանում աշխարհական տարրի լայն մասնակցութեան անհրաժեշտութեան, միաձայն ընդունեց յանձնաժողովի մշակած ընդհանուր սկզբունքային ծրագիրը, այն է՝ թէ ինչ մարմնի միջոցով հնարաւոր է կաթողիկոսի իրաւասութեան շրջանում, օրինակարգերի սահմանում, անմիջապէս իրագործել աշխարհական տարրի մասնակցութիւնը ազգային եկեղեցական-վարչական գործունէութեան մէջ։ Այդ մարմինը կազմվելու է թեմական խորհուրդների անդամներից և այն թեմերի ներկայացուցիչներից, որտեղ չը կան թեմական խորհուրդներ, հետևեալ եղանակով. ազգի հայրապետը, Էջմիածին գալով, կազմում է մի համագումար՝ մասնակցութեամբ թեմական հոգաբարձական խորհուրդների ներկայացուցիչների։ Խորհրդակցական ժողովի կողմից նաև ընդունվեց յանձնաժողովի հետևեալ առաջարկը. թեմ. հոգաբ. խորհուրդների ներկայացուցիչներից կազմված կենտ. խորհրդակցական մարմինը համարել ժամանակաւոր, մինչև որ Նորընտիր կաթողիկոսը ձեռք կառնէ հարկ եղած միջոցներ օրէնսդրական հիմունքներով կազմելու հա[illegible] խորհրդակցական ժողովը վճռեց ազգային եկեղեցական-վարչական սիստեմի բարեփոխման համար յանձնաժողովի կազմած ընդհանուր ծրագիրը ներկայացնել կաթողիկոսական ընտրութեան առիթով Էջմիածնում առաջիկայ հոկտեմբեր ամսին գումարվելիք համազգային պատգամաւորական ժողովին ի վերջնական քննութիւն և այդ ժողովից ընտրված լիազօրների միջոցով ներկայացնել ապագայ նորընտիր կաթողիկոսին, իբրև հայ ժողովրդի իղձը կամ ակնկալութիւնները ազգային եկեղեցական հաստատութիւնների բարեկարգութեան համար։

Կաթողիկոսական թեկնածուների մասին խորհրդակցական ժողովին հաղորդվեցին այն բոլոր գրաւոր տեղեկութիւնները, որ ստացել էր յանձնաժողովը Ռուսաստանի ու արտասահմանի հայ համայնքներից և գործիչներից, ապա Լէօն կարդաց մի զեկուցում Իզմիրլեան արքեպիսկոպոսի մասին, իսկ Գարեգին վարդապետը՝ Օրմանեան արքեպիսկոպոսի մասին։ Խորհրդակցական ժողովի մի շարք նիստերում տեղի ունեցած մտքերի փոխանակութիւնից յետոյ պարզվեց, որ իբրև կաթողիկոսական առաջնակարգ թեկնածուներ առաջարկվում են Իզմիրլեան և Օրմանեան արքեպիսկոպոսները։

Խորհրդակցական ժողովի նիստում միաձայն որոշվեց, որ ժամանակաւոր նախընտրական նոյն յանձնաժողովը շարունակէ իր գործունէութիւնը. այն է՝ ա) հաւաքել տեղեկութիւններ կաթողիկոսական թեկնածուների մասին, բ) առաջիկայ սեպտեմբեր ամսին կայացնել խորհրդակցական ժողովներ մասնակցութեամբ Թիֆլիսի թեմի պատուիրակների և գ) եթէ հնարաւոր է՝ հոկտեմբեր ամսին գումարել խորհրդակցական ժողով կաթողիկոսական պատգամաւորներից։

Յանձնաժողովը խնդրում է այն բոլոր անձանց, որոնք կարող են հաղորդել փաստալից տեղեկութիւններ կամ տալ կազմած տեղեկագրեր կաթողիկոսական թեկնածուների մասին, գրեն յանձնաժողովի նախագահ պ. Ս. Յարութիւնեանին հետևեալ հասցէով՝ Тифлисъ, контора армянскаго благотворительнаго общества, Абасъ-Абадская № 7.

Յանձնաժողովը խնդրում է միւս բոլոր լրագիրներին արտատպել այս ամենը։

Յանձնաժողովի նախագահ՝
Ս. Յարութիւնեան
Անդամներ՝
Հ. Առաքելեան, Ա. Արասխանեան, Մ. Արծրունի, Վ. Արծրունի, Ա. Բաբախանեան (Լէօ), Ս. Մամիկոնեան, Կ. Ստեփանեան, Ա. Քալանթար;
Անդամ-քարտուղար՝ Ա. Նազարէթեան

—

Հանգուցեալ Աբգար Յովհաննիսեանի մահուան [illegible] հաշիւ։

Ստացուել են. 1) Վաղարշապատից՝ ա. Վաղարշապատի աղջկանց դպրոցից (Ս. Գ. Ասլանեանի ձեռքով) 4 ր. 25 կ., բ. Վաղարշապատի օրիորդներից և տիկիններից (օր. Տէր-Աւետիքեանի ձեռքով) 4 ր. 30 կ., գ. Էջմիածնի ուսանողներից (Խ. Կ-ի ձեռքով) 3 ր., դ. Էջմիածնի ուսուցիչներից և ծառայողներից (Մ. Կանայեանի ձեռքով) 57 ր., ե. Էջմիածնի միաբաններից (Ս. Կանայեանի ձեռքով) 95 ր., զ. [illegible] Հայրիկից՝ 50 ր. 2) Իգդիրից (Յ. Հայրապետեանի ձեռքով) 39 ր. 20 կ. 3) Կարս [illegible] (Յ. Հայրապետեանի ձեռքով) 3 ր. Ընդամենը հանած 1 ր. 75 կ.—մնում է 254 ր. ([illegible]). 4) Բաքուից՝ ա. [illegible] 655 ր., բ. [illegible] Ա. Բաբախանեանի միջոցով [illegible] 100 ր. 5 Ալէքսանդրապոլից՝ (Վ. Ստեփանեանի միջոցով) 32 ր. 6) Մոսկվայից՝ [illegible] 50 ր. 7) Նոր-Նախիջևանից (Մ. Գ. Չարխիեանի միջոցով) 25 ր. 8) Փարիզից (բժշկապետ Ա. Բաբախանեանի միջոցով) 150 ր. 9) Թիֆլիսից՝ ա. [illegible] 80 ր., բ. բժշկապետ Նաւասարդեանից 5 ր., գ. [illegible] 50 կ., դ. Իս. Յարութիւնեանից 3 ր., ե. Ալ. Մելիք-Աղաբեանից 56 ր. Ընդամենը 1420 ր.

Ծախք. 1) [illegible] 1135 ր., 2) քանդակագործ Տէր-Մարութեանին *) 250 ր., 3) [illegible] 16 ր., 4) յայտարարութիւններ, [illegible] ծախք 19 ր. Ընդամենը 1420 ր.

Յանձնաժողովի նախագահ և գանձապահ՝
Ալ. Մելիք-Աղաբեան
Անդամ քարտուղար
Իս. Յարութիւնեան

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԵՀՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՆՑՔԵՐԻ ՄԱՍԻՆ

«Temps»-ի սեփական թղթակիցը հեռագրում է 24-ին յունիսի. «Երէկ օրը անցաւ վատ. [illegible] շահը կ'ուզէր [illegible] սահմանադրական [illegible] Առաւօտեան ժամը 6-ին 50 կօզակ [illegible]

---

*) [illegible]

վրա պատասխանատուութիւնը, հրամայելով իր գնդին հսկել մէջլիսի դռների վրա, գնաց նոր հրահանգներ ստանալու։ Ժամը 8-ին կրակեցին մէջլիսից, որով վիրաւորվեց մի կօզակ. բայց ոմանք պնդում են, որ ձգեցին ռումբ։ Կրակեցին և ձգեցին ռումբ նոյնպէս անջումանից (քաղաքական կլուբ կամ յեղափոխական ժողովատեղի). կօզակները սկսեցին կրակել, առաջ բերին մի թնդանօթ և սկսվեց մէջլիսի ռմբակոծումը. 2 ժամ տևեց, որով փասվեց և մասիկ գրավվող Զիլլի-Սուլթանի պալատը։ Մէջլիսի անդամները պատսպարվեցին մէջլիսի այգում։ 30-ը նրանցից ձերբակալվեցին շահի հրամանով»։ «Ճշտվում է, որ անջումանից և մէջլիսից ձգեցին ռումբ, որով 15 կօզակ սպանվեց և 20 զինուոր վիրաւորվեց. մէջլիսի Նախագահը, անջումանի անդամները ձերբակալված են»։

«Times»-ին, 24 յունիսի յայտնում են, որ վիրաւորների թիւը հասնում է 70-ի։

Քաղաքը այժմ գեներալ Լեախօվի ձեռքին է, որ թիկնապահ զօրքի հրամանատարն է։ Այդպէս, ըստ տեղեկութիւնների «Temps»-ի, «Matin»-ի և «Times»-ի, ոչնչացված է մէջլիսը։ Պարզվում է, որ սահմանադրութեան պաշտպանները դարձել են հիմա Զիլլի-Սուլթանի կողմնակիցներ, նրանք ուզում են Զիլլի-Սուլթանին գահ բարձրացնել։

«Temps»-ի առաջնորդողը 24 յունիսի, որ պարզում է Պարսկաստանի արդի քաղաքական դրութիւնը, մենք առաջ ենք բերում այստեղ։

«Սարսափելի անցքեր են կատարվել Պարսկաստանում. Իրանի պարլամենտը ռմբակոծվեց շահի զօրքի ձեռքով. հետեւանքն է սպանվածների և վիրաւորների ահագին թիւ։ Այդ վաղուց նախատեսված էր. Նոր շահ Մահմէդ-Ալին, ինքնակալ բնաւորութեան տէր մարդ, դժուարութեամբ տանում էր մէջլիսի իշխանութիւնը. Նա չը կարողացաւ ընտելանալ սահմանադրութեան հետ, շնորհված ժողովրդին իր հօրից, և այն օրից, երբ նա երդւեց Բահարիստանում կատարել սահմանադրութիւնը, ընդհանուր կարծիքն էր, որ նա կը վերանորոգէ ինքնակալութիւնը։ Մէջլիսը, որ զուրկ էր քաղաքակրթութիւնից, լաւ գործ կատարեց. գաւառական իշխանութիւնները դադարեցրին իրանց կամայականութիւնները, հարկերը բարեփոխվեցին, կրթութեան ահագին քայլեր եղան, բայց մէջլիսը ենթարկվեց անջումանների կոյր իշխանութեան։ Այդ անջումանները, որոնք շատ նման են մեր յեղափոխական ընկերութիւններին, նպատակ ունէին ուժեղացնել սահմանադրական շարժումը և ոչնչացնել համաձայնութիւնը կառավարութեան և մէջլիսի միջև։ Անջումանների միջամտութիւնը մէջլիսի ազատ կամքը խորտակելով, բաւականին խառնուրդ առաջ բերեց երկրում, որ դեռ չէ ընտելացել նոր սահմանադրական կարգերին։ Մինչ Թեհրանը մնում էր սառն, գաւառները անջումանների ազդեցութեան տակ փոքրիկ յեղափոխութիւններ էին առաջ բերում. ժողովուրդը մերժում էր հարկը, աւելի զարգացնելով անապահովութիւնը, երբ հիւսիսում, արևելքում կատարվում էին նուաճումներ (քիւրդական կամ թիւրքական)։ Այդ բոլորը աւելացնում էր շահի անհանգստութիւնը և ժողովրդի գրգռումը։ Ըէակցիայի մի գործ էր դա, անիշխանականութիւնը կատարեալ էր, երբ ամեն բանի մէջ խառնվում էին մէջլիսը, անջումանը և կառավարութիւնը։

«Մէջլիսը պահանջեց շահից հեռացնել իր ամենամօտ անձանց, որո՛նք ինքնակալական գաղափարների տէր են—էմիր Բահադուր խանին, որին շահը հարստացրել է, և Շապշալ խանին (Ռուսաստանի հրէայ, որ շահի երեխաների ուսուցիչ է). շահը խոստացաւ, բայց չը կատարեց խոստումը. էմիր Բահադուր խանը փախաւ ռուսաց դեսպանատուն։ Մէջլիսը ուղարկեց մի պատգամաւորութիւն, խնդրելով որ շահը կատարի խոստումը։ Շահը ձերբակալեց պատգամաւորներին—Ալա-Դովլէին, որ շատ յայտնի է, Ջելալ-էդ-Դովլէին (Զիլլի-Սուլթանի որդին և շահի արիւնակից) և սարդար-Մանսուրին—հեռագիրների մինիստրին։

Այդ ձերբակալումը ոտքի բարձրացրեց Թէհրանը. Զիլլի-Սուլթանի գործին այդ բանը շատ ձեռնտու էր—վիրաւորված մարդիկ եկան Բահարիստան և Մահմէդ-Ալիին վախեցրին. վերջինս առաջարկում է հեռացնել դրանց, պահանջում է մէջլիսից օգնութիւն։ Երկու օրից յետոյ մէջլիսի նախագահ Մոմտազ-էդ-Դովլէն, Պարիզի պարսից դեսպանի եղբայրը և մէջլիսի անդամներ ուղարկվում են շահին մի մէմօրանդում։ Շահը յանդիմանեց մէջլիսը, նրա թուլութեան համար կարգը վերականգնելու մէջ և ասաց. «Ես մտադիր չեմ կորցնել, առանց ի գործ ածելու իմ սուրս, այն, ինչ որ իմ պապերս սրով են ձեռք բերել»։ Մենք չը գիտենք մանրամասնութիւններ, թէ ինչ էր առաջարկում մէջլիսին շահը, բայց, ըստ երևոյթին, շահը հեռացաւ Թէհրանից, որ գաւառի օգնութեամբ և բռնի ույժով ոչնչացնէ յեղափոխութիւնը։ Դրանով, ի հարկէ, Մահմէդ-Ալին չէ կարող վայելել հաւատ դէպի իրան՝ ժողովրդի կողմից»։

Պարիզ S. Ա.

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, 10 յունիսի

Այն տարաբաղդ և տարօրինակ երկրում, որ Պարսկաստան է կոչվում և որն, ըստ անեկդոտի, Աստուծու ստեղծած միակ անեղծ, անարատ մնացած երկիրն է հողագնդի վրա, վերջին երկու տարվայ քաղաքական փոփոխութիւնների ժամանակընթացքում իրերի դրութիւնը աւելի ու աւելի խառնված ձև է ստացել, և շատ այլանդակ են դարձել տիրող կարգերը, եթէ երբէք ներելի լինի կարգ անուն տալ այն անիշխան, անկանոն վարչական դրութիւններին, որոնցով կառավարվում է երկիրը։ Սրանով ես միտք ունեմ մի փոքր գաղափար տալ Սալմաստի պօստային վարչութեան գործերի մասին միայն։

Մի տասնեակ տարի առաջ, ինչպէս արդէն յայտնի է, երբ Պարսկաստանի պօստի և մաքսատան գործերը սկսվեց կառավարվել բելգիացիների ձեռքով, վերջիններս՝ որպէս տեղական պատրաստ, կարող ումի՝ գործի մէջ վեր առին բազմաթիւ հայերի. սրանք—վերջիններս սակայն, երկու-երեք տարուց ի վեր, Թուրքերի մէջ զարթնող ազգային զգացման կամ, աւելի ճիշտ, ֆանատիկոսութեան բորբոքվելու պատճառով վտարվեցին գործերից և նրանց փոխարինեցին Թուրքերը։ Այժմ տեսնենք գործերն ինչպէս են գնում սրանց ղեկավարութեամբ. այստեղ այժմ արձանագրելու եմ Սալմաստի պօստատան մասին միայն, բայց կարծում եմ սա բացառութիւն չէ կարող կազմել ուրիշ տեղերի հետ, փոքր բացառութեամբ բոլոր տեղերն էլ միևնոյն կը լինեն։ Մի տարվայ չափ այստեղ շաբաթական երկու անգամ (Թաւրիզի գծով) պօստ ստացվելուց յետոյ, դարձեալ սկսեց ըստ առաջնոյն շաբաթը մի անգամ ստացվել, այն էլ անկանոն, գրեթէ առանց որոշեալ օրերի. իսկ որոշ ժամերին գալուստը անգամ չէ կարող լինել։ Պօստը գալիս է վերջապէս. Նամակներին անհամբեր սպասող խուռն բազմութեանը (որոնք 5—15 վերստ հեռու տեղերից եկել են նամակ ստանալու համար) մի ժամ և աւելի սպասել տալուց յետոյ, ցրվիչ պաշտօնեան նստում է պօստատան շէնքի (որ երկրորդ յարկումն է) լուսամուտի մէջ, նախ կարդում է Թուրքերի ծրարները։ Հասցէների ներկայ եղողների ծրարները շպրտում է տէրերի երեսներին, իսկ բացակայ եղողներինը դնում է ծնկների տակ։ Թուրքերին բաժանելուց վերջացնելուց յետոյ հերթը հասնում է քրիստոնեաներին, և մեզալուն այստեղն է. ցրվիչը, ինչպէս նաև ռեյիսը (կառավարիչ), եւրոպական կամ հայերէն լեզուներ չիմանալով, ներկաներին ուղղում է հետևեալ խօսքը. «Ձեզանից ո՞վ կարող է լաւ կարդալ ռուսերէն լեզուն, թող այստեղ գայ»։ և գնում են վերև մէկը կամ մի քանիսը։ Դրսում սպասող բազմութիւնը պարտաւոր է դեռ սպասել, մինչև որ հասցէները թարգմանվեն Թուրքերէնի։ Թարգմանվում վերջանում է, վաճառականների և աչքի ընկնող մարդկանց ծրարները նոյն ձևով տէրերին է տրվում. իսկ մեծամասնութեանը (որոնց տէրերը նոյնիսկ ներկայ էլ լինեն) ճխտում է ծնկների տակ. դրանք «արասանոցներ» (պարսկ. արասին 4 շահի է) են, այսինքն, դրանց տէրերը, որոնք հասարակութեան խեղճ ու կրակ անդամներ են, պէտք է մի-մի արասի տան ցրվիչին, յետոյ իրանց հասցէի նամակները ստանան։ Ինչո՞ւ են առնում այդ արասին. Նրա համար, որովհետև նամակը գալիս է եղել մի սիրելի-ղարիբից, նրա մէջ կը լինի ողջառողջութեան աւետիսը կամ փոխանակագրի մի կտրօն. ինչ նշանակութիւն ունի նամակ ստացողի համար մի արասին, որ նա չը տայ և չը ստանայ իր այդ նամակը։ Պարսիկ պաշտօնեան այդ շատ լաւ է հասկացել և օրէնք է ստեղծել, որ ամեն մի նամակին մի արասի տրվի։ Եւ անտրտունջ տրվում է արասին, ստացվում է նամակը։ Եթէ համարձակի մէկը «օրէնք»-ից խօսել, թէ ինչ իրաւունքով առնվում է այդ արասին, պատասխանը պարզ ու պատրաստ է և Պարսկաստանում շատ առիթներում սովորական դարձած՝ «վէր, դիմմա, քէօփէյօղլի» (տուր, մի խօսիր, շանորդի)։ Բայց գլխաւոր ցաւը նրանումն է, որ շատ անգամ, միշտ և ամեն տեղ «առանձնաշնորհեալների»—հարուստների նամակները յանձնելուց յետոյ, ծնկի տակի նամակները վերցնում է և ներս է մտնում, էլ չէ երևում. դրսում սկսվում է հարայ-հրոց, ժխոր և բացագանչական ձայներ՝ «աղա-Իսմայիլ, Իսմայիլ բաջ, միրզա-Իսմայիլ, քալբ-Իսմայի՜լ, քաղըմ վէր, քա՞ղազ, քաղա՜զ...», անվերջ կանչում են ցրվիչին. վերջինս, լուսամուտի առաջ գալով կամ կոպիտ կերպով յանդիմանում է ներկաներին ասելով «չունէք, չը կա՛յ, ինչ մարդու գլուխ տանում էք», և կամ մի քանիսի նամակներ յանձնում, արասիներ առնում և էլի յետ գնում ուրիշ գործով զբաղվում, և այսպէս ժամերով դրսում սպասում է բազմութիւնը, մինչև որ պաշտօնարանի դուռը բացվում է և բազմութիւնը ներս է խուժում և արասին վճարում, իրան հասցէին եղած նամակը վերցնում։ Եւ այսպէս շարունակ ամեն անգամին։ Բացակաների նամակներին, ով որ մի արասի տուեց, կարելի է նամակը նրան յանձնել տիրոջ հասցնելու. իսկ սաւրեցի մի աղքատիկ հայ պայմանաւորվել է պօստատան այդ ցրիչի հետ, ամեն անգամին մի որոշ չափով փող է տալիս նրան և իրանց կամ ուրիշ հարևան գիւղերի նամակները տանում է տէրերին տալիս ու արասիներ գանձում, որից մի քանի արասի էլ իրան է շահ մնում... Արդէն մի քանի ամսից ի վեր է, որ արտասահմանից եկած բոլոր թերթերին՝ մեծ կամ փոքր իւրաքանչիւր կապոցին՝ 2 շահի է տրվում, իսկ այս՝ կենտրոնից է կարգադրված։ Որովհետև Պարսկաստանից դէպի արտասահման լրագիրներ չեն գնում, դրա փոխարէն պօստային միջազգային բիւրօն արտօնել է, որ ծրար՝ն 2 շահի առնվի ստացողից, արտասահմանից եկած ծրարների համար։ Այս կարգադրութեան պատճառով, տեսէք, ինչ անկարգութիւններ, ինչ կուրիօզնի դէպքեր են տեղի ունենում։ Որովհետև շատերը զլանում են ամեն մի ծրարին 2 շահի տալ, լրագիրների կապոցներ մեծ քանակութեամբ վայր թափված են լինում պօստատանում (այս հանգամանքը, ասենք, մի յայտարար էլ է սալմաստեցիների ընթերցասիրութեան չափին). ուզողը կարող է 2 շահի տալ և ուզած թերթի մի կապոց վերցնել։ Թերթերը կորելու շատ ու շատ դէպքեր են տեղի ունենում, որովհետև պօստատանը օտար լեզուներ իմացող մի պաշտօնեայ չը կայ, որովհետև պօստային վարչութեանը հարկաւոր է կապոցին իր 2 շահու տէր լինել,—նրա համար միևնոյն է թէ նրա ստացող ո՞վ կը լինի՝ տէ՞րը թէ՞ մի ուրիշ մարդ։ Ենթադրենք թէ քո մի կամ մի քանի թերթեր կորել են, չես ստացել և դիմում ես կառավարչին. նա քեզ այսպէս կը պատասխանի. «Փիէ, ես ինչ անեմ, չը եայ էլի, ժամանակին գայիր ու ստանայիր»։ Երբ առարկես՝ «Ախար որոշեալ ժամանակ չը կայ պօստ ստացվելուն, չի իմացվում թէ երբ է գալիս պօստը, թէ տեղը հեռու լինելով՝ ամեն անգամ հեշտ չէ գալը և այլն»,—պատասխանում է քեզ ըէիսը. «Ես ինչ անեմ. խօ ես չեմ պահել ինձ համար, խօ ես կարդալ չեմ իմանում. դրանցից հազարը (ցոյց տալով թափտած թերթերի վրա) ինձ մօտ շահի չարժէ։ Քոնը կորե՞լ է, վերցրու դրանցից, բազավուղն (տարբերութիւն) ինչ է. վերցրու որն որ քոնն է կամ քանի հատ որ կուզես, բուշարթ (պայմանով), որ իւրաքանչիւրին երկ-երկու շահի տաս»։ Երբ միամտաբար ասես՝ ինչ իրաւունքով, ախար, ուրիշին պատկանելի թերթը ես տանեմ, կամ թէ իմ թերթի վերաբերմամբ էլ այդպէս էք վարվել, որ կորսվել է,—պատասխան կը ստանաս. «Է՛հ, գլուխ ես տանում... Թերթ չը կայ. հիմա ասածդ ինչ է. ուրիշները քոնն են տարել, դու էլ նրանցը վերցրու. ապա թէ չես անի, գնա, գանգատվիր»...

Մի անգամ առիթ ունեցայ պօստատանը դիտել հետևեալ դէպքը։ Մէկի հասցէով թերթեր ստացվել էին, թերթերը տարվել էին և հասցէ կրող փաթեթները դէն էին գցվել. տէրը գտնելով դրանք և ցոյց տալով ըէիսին, բացատրութիւն էր պահանջում նրանից, թէ ինչո՞ւ հարկաւոր պահպանութիւնը չէր անվում, որ ծրարները հասցվեն ըստ պատկանելոյն—իրան. ըէիսի պատասխանը սա եղաւ. «Ես ինչ անեմ, ինչ անեմ որ անամօթ մարդիկ քո թերթդ վերցրել են. դու կարող ես տեղը (խմբագրութեան) գրել, թող սիֆարիշ (յանձնարարված) ուղարկեն. այն ժամանակ էլ չեն կորչի, այն ժամանակ ես պատասխանատու եմ. ես ինչ անեմ քեզ հետ»... Ընթերցողին գուցէ անհաւատալի թուայ, երբ ասեմ, որ պօստատան ծառայողը մի անգամ ասելիս էր եղել իմ մի ծանօթին, թէ՝ «Ի զուր ես փող ուղարկում թերթի համար, նրա կէսը, կէսի կէսը եթէ ինձ տալու լինես, քեզ ամեն շաբաթ ուզած թերթերը կարող եմ տալ»։ Մի այլ ծիծաղաշարժ դէպք ես։ Մի անգամ Դիլմանում նստած մի քանի ընկերներով պօստի գալուն էինք սպասում. մեր խօսակցութիւնը պօստի անկանոնութեան շուրջն էր դառնում. մեզանից մէկը գրազ եկաւ և պնդեց, որ միմիայն մի դռանով՝ 3 րուբլուց ոչ պակաս արժողութեամբ՝ թերթեր կարող է բերել և, չանցած 10 րօպէ, սա «փառաւոր» կերպով տարաւ, 20 շահիով (20 կ.) բերելով 15 դռանից աւելի արժողութեամբ զանազան թերթեր (Ամերիկայից, Եգիպտոսից, Եւրոպայից և Ռուսաստանից ուղարկված), որոնք վայր էին թափված պօստատան անկիւններում։ Եւ սա մի բացառիկ դէպք չը պէտք է ընդունել, այժմ էլ և միշտ էլ կարելի է այդպէս վարվել...

Երկար կը լինէր մի առ մի թւել այն ամեն անկանոնութիւնները և ծաղրելի դէպքերը, որոնք մեզ՝ Սալմաստում եղողներիս համար այլ ևս սովորական և տանելի են դարձել, բայց, պարսիկ պաշտօնէութեան «բարեխղճութեան» մասին մի նմուշ էլ տալով վերջացնենք այս նամակը։ Այստեղի պօստատան ծառայող՝ մի քրիստոնեայ պաշտօնեայ, որից կաշառք էր պահանջում ըէիսը՝ պաշտօնը շարունակել կարողանալու համար և որ հէնց այդ պատճառով այժմ պաշտօնի մէջ չէ գտնվում, պատմում է իր տեսածներից թէ՝ յաճախադէպ իրողութիւն էր, որ երբ նամակները յանձնվում էին ուղարկելու համար*), ըէիսը առանց խղճահարվելու, նամակներից շատերը պատառոտում է եղել և վառարան գցում, իսկ նամակադրոշմի փողն իր գրպանը գցում. այս իմանալով, այժմ ինձ անհասկանալի չէ, որ իմ բարեկամուհիներից մինը, երբ մի անգամ ասում էր, որ իր ամուսնուց 18 հատ նամակ էր ստացել և նա իւրաքանչիւրին իր ժամանակին պատասխանել էր, բայց բարեկամուհուս ամուսինը ցաւ էր յայտնել իր տիկնոջ՝ իր նամակներին չը պատասխանելու համար, որից, 18 ի փոխարէն, միայն 7-ն էր ստացել. երևի տիկնոջ 11 նամակները դէպի պօստատան վառարանն էին գնում եղել...

Վերև գրածները գուցէ չափազանցութիւններ թուան ընթերցողներին,—նրանք իրանց կարդացածներին չը կարողանան հաւատալ, բայց մենք էլ մեր տեսածներին չէինք հաւատայ, եթէ մի պահ մոռանայինք, որ Պարսկաստանում չենք, այլ և ներկայ Պարսկաստանում...

Սալ-Ման

---

*) Այստեղ մարկաներ գնել և ծրարի վրա կպցնելով ուղարկել դեռ ընդհանրացած սովորութիւն չէ դարձել. առհասարակ նամակը և նամակադրոշմի արժէքը տրվում է կառավարչին և սա կպցնելով ուղարկում է։ Սալմաստում ոչ մի տեղ, ոչ մի գիւղում պօստարկղներ չը կան. ամբողջ մի գաւառում մի պօստատուն կայ միայն, որ Դիլմանումն է, գաւառի կենտրոնատեղում, այն էլ այսպիսի պայմաններում...

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

30 յունիսի

ՍԸԶԷՎԿԱ։ Քաղաքային դուման որոշեց իր միջոցներով բանալ կլասիքական գիմնազիա։ Այժմ կը բացվեն առաջին երկու դասարանները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ծովային գեներալ-շտաբի կառավարիչ հակա-ծովապետ Բրուսիլովը արձակվում է այժմեան պաշտօնից Բալտիական ծովի կրտսեր ֆլագման նշանակվելու առիթով։

Պետական Խորհրդի ֆինանսական մասնաժողովը 1908 թ. սովորական ծախքերը որոշեց 2,312,251,090 րուբլի, արտակարգ՝ 269,152,078 րուբլի, սովորական եկամուտները՝ 2,386,945,498 րուբ., արտակարգ՝ 194,457,670 րուբլի։ Այդպիսով այս տարվայ ընդհանուր գումարը 150,803,333 րուբլով պակաս է Դումայի որոշածից։

Բարձրագոյն հաստատութիւն գտան Պետական Դումայի և Խորհրդի ընդունած օրինագծերը։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ։ Պէրմ-Եկատէրինբուրգի երկաթուղագծի վրա աւրվեց դեպօն մի քանի վագոններով և վագոններում քնած երկու բանուորների հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստր ստատս-սեկրէտար հօֆմէյստէր Ստոլիպին, բարձրագոյն թոյլտւութեամբ որոշ ժամանակով մեկնելով մայրաքաղաքից և իրան վերապահելով մինիստրութեան կառավարութեան գլխաւոր ղեկավարութիւնը, բարձրագոյն թոյլտւութեամբ հերթական գործերի կառավարութիւնը յանձնեց իր երկու օգնականներին՝ Կրժանօվսկուն և Մակարովին, իսկ տեղական տնտեսութեան գլխաւոր ղեկավարութիւնը՝ Գերբէլին։

Արտաքին

30 յունիսի

ՍԱՅԳՕՆ։ Բակինինգ նահանգում, Նայտան քաղաքում պիրատները սպանել են ոստիկանական տեսչին և մի տեղացի պաշտօնեայի. զինուորների ցուցմունքով ձերբակալված են երկու անամիտ-պրօֆէսօրներ և թարգմանը և յանձնված են քննիչ մասնաժողովին։

ՊՐԱԳԱ։ Ռուս պատգամաւորներին կայարանում ընդունեցին Վօլօդիմիրօվը և Տեբօրսկին, քաղաքի ներկայացուցիչները և բազմաթիւ հասարակութիւն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլօվօդսկում, հիւրանոց «Ռօսսիա»։
(ա. օ.) 100—78

Լոյս տեսաւ
ՀԱՍԿԵՐ
№ 6 յունիս 1908 թ.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
1. Կաչաղակ, Յակ. Աղաբաբի.—2. Ամենից լաւ տունը, փոխադր. Յովհ. Թումանեանի.—3. Ընկերներ, մանկական յիշողութիւններից. Լևոն Մանուէլեան.—4. Տղանուկի, պատմուածք Յ. Աղաբաբի.—5. Ցորնատէրն ու ջաղացպանը, հէքիաթ Աթ. Խնկոյեանցի.—6. Սառա կրու, վէպիկ Ֆ. Գ. Բեռնետի. Թարգմ. Շուշ. Տէր-Նիկողոսեան.—7. Արու-Հասանի մաշիկները, արևելեան զրոյց Սաղըլեանի.—8. Կենդանիների կեանքից, Սալիմեանի.—9. Դէսից-դէնից.—10. Զուարճալիք—Մարիամ տատիկի տոպրակից։
—
Մանկավարժական գրադարան
XV—XV Պրոֆ. Ի. Ա. Սիկօրսկի—Մանկան հոգին, Թարգմ. Մխ. Աւ. և Ստ. Լիս.
97—132.

"ՆՈՐ-ԴՊՐՈՑ"
ամսագրի № 2-ը լոյս տեսաւ յունիսի 20-ին հետեւեալ բովանդակութեամբ.
1. Մեր ծխական դպրոցների նոր կանոնադրութեան նախագիծը, Յ. Տէր-Միրաքեան. 5—13. 2. Մեր ցանկացած դպրոցները, Իս. Յարութիւնեան. 13—16. 3. Էքսպերիմէնտալ մանկավարժութիւն, Իսահակ Յարութիւնեան. 17—25. 4. Մի համառօտ ակնարկ ժողովրդական դպրոցների կանոնադրութիւնների վրա, Ս. Արովեան. 26—34. 5. Ինչպէս պէտք է հէքիաթներն աւանդել, Ա. Զ. 35—50. 6. Մեր հոլովների մասին, Ղ. Աղայեան. 51—55. Կամքի դաստիարակութիւնը, Թ. Խզմալեան. 56—61. 8. Հայ աշակերտների կրթական գործը Վրաստանի և Իմերէթի թեմում, Յ. Նահապետեան. 62—72. 9. Կ. Պօլսի թաղային վարժարանները, Ս. Լիսիցեան. 72—77. 10. Կովկասահայ դպրոցների ուսուցչ. միութիւնը, Արտ. Աբեղեան. 77—80. Քննադատութիւն և գրախօսութիւն, Բրիչ. 81—87. 12. Տեղեկագիր ուսուցչ. միութեան կենտր. վարչութեան, 87—96. 13. Ուսուցչ. միութեան կենտրոն. ընդհ. ժողովը, 96—100. 14. Դպրոցական կեանք, 100—110. 15. Խմբագրութեան կողմից, 110—116. Ուսուցչական հարկ, 111—112. 17. Նամակ խմբագրութեան, 112—118. Ստացված գրքեր։
№ № 1—6 արժէ միութեան անդամների համար 2 ր., իսկ ոչ անդամների համար 3 ր.։
Հասցէ՝ Тифлисъ, редакція журнала «Норъ Дпроцъ», Бебутовская, № 30.
Պատասխանատու խմբագիր՝
Իսահակ Յարութիւնեան
(Հ. 2.) 2—1

Լոյս տեսաւ
Խաչատուր Խաչատրեանի
Ծիծաղաբեր
Հայրիկ, Պարոնեան, Պըլը-Պուղի, Գող Մխիթար, Դանտէ, Լաֆօնթէն, Եզոպոս, Ողոմպիանոս, Մօլլա Նասր-Էդդին, Կրիլով, Բալակիրեւ և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։
182 ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն-անեկդոտներ, 112 երես։
ԳԻՆՆ Է 20 ԿՕՊԷԿ
Դիմել բոլոր գրավաճառներին։ Ինձանից գումարով գնողներին 20% զեղչ և ճանապարհածախսը իմ հաշւին։ Ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ, Хачатуру Хачатріанъ, 9 уч. Лысогорскій пер. № 10.
(Հ. ու. կ.) 8—1

ՍԱՄԱՐՂԱՆԴԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ
հարկաւոր են
մի ու. ուսուցիչ՝ 18 դաս (հայոց լեզ. և կրօնութիւն), ռոճիկ 700 ր., միևնոյն ժամանակ նա ճաշից յետոյ մի ժամ հայերէնով պարապելու համար (կողմնակի խմբական դասեր) ստանալու է առնուազն 300 ր., մի ուսուցիչ՝ 24 դաս. (թւաբան., երգեց., բնագիտ., աշխարհագր.) ռոճիկ 600 ր., մի վարժուհի (հայախօս) 24 դաս. (ռուսաց լեզ., ձեռագ., հ. վայելչ.) ռոճիկ 600 րուբ.։ Բացի ռոճիկները իւրաքանչիւրին 50 րուբ. ճանապարհածախս։
Դիմել՝ Самаркандъ, типо-литографія Демурова, попечит. армян. училища. 4—1

Հարկաւոր են
Պետրովսկի հայոց դպրոցի և եկեղեցու համար
1) Ընթացաւարտ և փորձառու ուսուցիչ հայերէնից և առարկաներից. 26—28 դաս. տարեկան ռոճիկը 600 րուբլի։
2) Ձայնաւոր և տեղեակ տիրացու, որը պէտք է վարէ եկեղեցու սպասաւորութիւնը, պատրաստէ երգեցիկ խումբ և դպրոցում էլ ունենայ 3—7 դաս։ Տարեկան ռոճիկը 300 րուբլի և տիրացուական արդիւնք 300—350 րուբլի։
Դիմել՝ Петровскъ-портъ, Дагест. обл., армянскому церковно-приходскому попечительству. (ապ.) (o. մ.) 3—1

Типографія „Экономія" Ав. Мугдусіаконова съ С-ми. Большая Ванкская ул. № 3.